

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Մեպոնբեր 2016

ՀՀ և Համաշխարհային տնտեսության
իրադարձություններ

2008

Fast

astic: %K(5) 77.33

%D(3) 75.31

20,00

MA(13) 4,898,306

Volu

Բովանդակություն

Ռիսկերի մասին նախազգուշացում.....	3
Հաճախակի օգտագործվող հապավումներ	4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	5
Իրական հատված.....	6
Պետական հատված.....	9
Դրամավարկային և ֆինանսական հատված.....	10
Արտաքին հատված.....	14
ՀՀ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ. ՀՈՒԼԻՍ 2016.....	17
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	18
ԱՄՆ	19
ԵՄ	24
Չինաստան	28
Ճապոնիա	31
Ապրանքային շուկա	33
Արժույթային շուկա.....	40
Ֆոնդային շուկա	48
ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ.....	52

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է դիտարկվի որպես լիարժեք և արժանահավատ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համապատասխան դեպքերում ձգտում է ժամանակին թարմացնել ներկայացված վերլուծական տեղեկատվությունը: Սույն հաշվետվության մեջ պարունակվող տեղեկատվությունը և հետևությունները չպետք է ընկալվեն որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Դիլինգային Կենտրոն, ՀՀ, Քաղաք Երևան, Պուշկինի 19

Ֆինանսական շուկաների վերլուծաբաններ՝ Թ. Սարգսյան, Ա. Մաթասյան

Հաճախակի օգտագործվող հապավումներ

ԱԳԻ	Արտադրողների գնային ինդեքս
ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՖՊՀ (ԴՊՀ)	Ֆեդերալ (Դաշնային) պահուստային համակարգ
Core	Ցուցիչ, որ ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանում ունեցող բաղադրիչներ
MoM	տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ ամսվա նույն ցուցանիշը
PMI	Purchasing Managers' Indice . ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները և այլ կարևոր ցուցանիշներ
QoQ	տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
QE	Քանակական մեղմացում
YoY	տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ տարվա նույն ցուցանիշը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Իրական հատված

ՀՆԱ: 2016 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է 1.128 տրլն դրամ (շուկայական գներով): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՆԱ իրական աճը կազմել է 1.5% (YoY): Համեմատության համար նշենք, որ 2016 թվականի առաջին եռամսյակում ՀՆԱ մեծությունը 898,9 մլրդ դրամ էր, որը 2015թ առաջին եռամսյակի ՀՆԱ-ն գերազանցում էր 4.5%-ով (YoY): Այսինքն՝ աճի տեմպը երկրորդ եռամսյակում դանդաղել է:

Մեկ շնչի ՀՆԱ-ն 2016 թվականի առաջին եռամսյակում կազմել է 299,982 դրամ (614 ԱՄՆ դոլար), իսկ երկրորդ եռամսյակում՝ 376,690 դրամ (786 ԱՄՆ դոլար):

Երկրորդ եռամսյակի ՀՆԱ-ի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն առևտուրն ու ծառայությունները՝ 53.3%: Արդյունաբերության (ներառյալ էներգետիկան) կշիռը ՀՆԱ-ում 18.2% է, գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, ձկնորսության, ձկնաբուծության ոլորտները միասին՝ 11.3%, շինարարության տեսակարար կշիռը՝ 9%:

Տնտեսական ակտիվություն: 2016թ հունվար-հուլիսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 3%-ով (2015թ-ին՝ +4.2%), միայն հուլիսին 2015թ հուլիսի նկատմամբ՝ նվազել է 4.3%-ով (YoY) (2015թ-ին՝ +4.2%), իսկ հունիսյան ցուցանիշի նկատմամբ աճը կազմել է 2.5% (MoM) (2015թ-ին՝ 9.2%): Փաստորեն՝ 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ 2016թ ՀՀ-ում տնտեսական ակտիվությունն իջել է:

2016թ հունվար-հուլիսին տնտեսական ակտիվության աճը (YoY) հիմնականում պայմանավորված էր արդյունաբերական ոլորտի 7,9%, ծառայությունների ոլորտի 7.6%, գյուղատնտեսության ոլորտի 1.3% աճով: Մինչդեռ առևտրի ոլորտը շարունակում է գրանցել բացասական դինամիկա՝ նշված ժամանակահատվածում

Աղյուսակ. 2016թ ՀՀ տնտեսության ճյուղերի աճը/անկումը 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ, %						
Ոլորտ	Ապ	Մյ	Հն	2016թ I կես	Հվ- հլ	Հլ
Արդյունաբերություն	11.5	9.1	8.9	9.8	7.9	2.8
Գյուղատնտեսություն	5.4	5.8	-0.2	3.2	1.3	-3.8
Շինարարություն	-16.5	-9	-7.7	-10.4	-7.6	-6.8
Բեռնափոխադրումներ	2.1անգ	2.2անգ	96.5	3.3անգ	83.0	54.2
Կապ ¹	-6.4	-11.9	-11.5	-10	-7.3	-11.9
Ծառայություններ	7.8	5.9	6.6	6.6	7.6	4.1
Առևտուր	0.1	1.1	-0.3	0.5	-0.4	-1

կրճատվելով 0.4%-ով: Անկում են գրանցել նաև շինարարության՝ 7.6% և կապի՝ 7.3% ոլորտները:

Միայն հուլիս ամսին տարեկան կտրվածքով ՀՀ

¹ Ռադիոժառանգների, հեռուստաժառանգների կազմման և հեռարձակման հեռահաղորդակցության ծառայություններ

տնտեսական ակտիվության թուլացումը պայմանավորված էր կապի ոլորտի 19%, շինարարության 6.8%, գյուղատնտեսության 3.8% և առևտրի ոլորտի 1% անկմամբ: Մինչդեռ ծառայությունների և արդյունաբերության ոլորտները 4.1% և 2.8% աճ են գրանցել համապատասխանաբար:

Հունիսի նկատմամբ տնտեսական ակտիվության 2.5% աճը պայմանավորել են


Աղյուսակ. 2016թ ՀՀ տնտեսության ճյուղերի աճը/անկումը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ, %					
<i>Ոլորտ</i>	<i>Ապ</i>	<i>Մյ</i>	<i>Հն</i>	<i>2016թ II եռ.</i>	<i>Հլ</i>
Արդյունաբերություն	4.7	-3.9	11.4	13.9	-6.2
Գյուղատնտեսություն	55.7	52.2	98.3	185.3	50.6
Շինարարություն	9.3	43.8	21.6	96.2	-3.5
Բեռնափոխադրումներ	24.5	11.8	19.3	72.7	-18.9
Կապ ¹	-3.2	0.6	4.4	4.1	2.4
Ծառայություններ	-2.6	6.0	9.0	13.2	-4
Առևտուր	-2.4	5.5	15.4	26.2	3.5

գյուղատնտեսության ոլորտի 50.6%, առևտրի 3.5% և կապի ոլորտի 2.4% աճը:

Իսկ արդյունաբերության, ծառայությունների և շինարարության ոլորտներում գրանցվել է համապատասխանաբար 6.2%, 4% և 3.5% աճ:

Հուլիսին արդյունաբերության ոլորտում 2.8% (YoY) աճը պայմանավորված էր հանքագործական արդյունաբերության ոլորտում 20.6%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտում 18.5% և ջրամատակարարման ու թափոնների կառավարման ոլորտում 1.5% (YoY) աճով: Մինչդեռ մշակող արդյունաբերության ոլորտում 4% անկում է գրանցվել:


Բացարձակ արժեքով դիտարկելու դեպքում 2016 թվականի հունվար-հուլիսին առաջատար է առևտրի ոլորտը՝ 1.2 տրլն դրամ ծավալով: Երկրորդ տեղում է արդյունաբերական հատվածը՝ 777.4 մլրդ դրամ, երրորդն է ծառայությունների ոլորտը՝ 690.1 մլրդ դրամ, չորրորդ տեղում է գյուղատնտեսության ոլորտը՝ 344.02 մլրդ դրամ, հինգերորդն է շինարարության ոլորտը՝ 158.7 մլրդ դրամ: Կապի ոլորտում ստացված հասույթը կազմել է 88.6 մլրդ դրամ:



Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը 2016թ հունվար-հուլիսին կազմել է 4166.1 մլն կՎտ/ժ՝ 2015թ նկատմամբ կրճատվելով 5.5%-ով: Միայն հուլիսին արտադրվել է 559.9 մլն կՎտ/ժ Էլեկտրաէներգիա:

2016թ հուլիսին նախորդ ամսվա նկատմամբ գնանկումը ՀՀ-ում խորացել է, սակայն օգոստոսին բարելավվել է մինչև հունիսյան մակարդակը: Ամսական կտրվածքով հունիսյան 0.5% դեֆլյացիայից հետո հուլիս ամսին վերջինս կազմել է 2.3% (MoM)՝ օգոստոսին կրկին բարելավվելով մինչև 0.5% գնանկման ցուցանիշը: Հուլիսյան անկումը հիմնականում պարենային ապրանքների 4.3% գնանկման արդյունք է:

Օգոստոսին պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նվազել են 0.7%-ով: Նույն չափով նվազել են նաև ոչ պարենային ապրանքների գները, իսկ ծառայությունների ոլորտում սակագների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:



Տարեկան կտրվածքով գնանկումը վերջին երեք ամիսներին խորացել է՝ հուլիսին կազմելով 1.3%, իսկ օգոստոսին՝ 1.9%: Վերջինս պայմանավորված է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 3.1%, ոչ պարենային ապրանքների՝ 3.4% գնանկմամբ: Իսկ ծառայությունների սակագներն աճել են 0.8%-ով:


Հունվար-օգոստոսին 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցվել է 1.6% դեֆլյացիա՝ պարենային ապրանքների գների՝ 3.8%, ոչ պարենային ապրանքների՝ 1.9% անկմամբ և ծառայությունների գների 2.3% աճով:

2016թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.5%, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 0.2 տոկոսային կետով (0.3% նվազում):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից սահմանափակ թվով բարիքներից կազմված զամբյուղի համար հաշվարկված գնային ինդեքսն 2016թ հուլիսի նկատմամբ օգոստոսին նվազել է 0.02%-ով:


Պետական հատված

2016թ. հուլիս ամսին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են մոտ 93.8 մլրդ ՀՀ դրամ, ինչը 4.3 մլրդ-ով զիջում է նախորդ ամսվա եկամուտների ծավալը: Եկամուտների կրճատմանը զուգահեռ ամսվա ընթացքում գրանցվել է ծախսերի մոտ 18.3 մլրդ-ով աճ: Հունիս ամսվա 107.5 մլրդ դրամի փոխարեն արդեն հուլիսին պետական բյուջեի ծախսերը կազմել են մոտ 125.8 մլրդ ՀՀ դրամ: Արդյունքում ավելի քան 3 անգամ աճել է ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը՝ կազմելով մոտ 32 մլրդ դրամ: Նշենք, որ 2016թ. ընթացքում նման մեծ չափերի բյուջեի դեֆիցիտը հասել էր փետրվար ամսին, ինչից հետո արդեն մինչև հունիս ամիսը գրանցվում էին բյուջեի դեֆիցիտի կրճատումներ:



Բյուջեի դեֆիցիտի մոտ 31.2 մլրդ-ը ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ 0.8 մլրդ-ը՝ արտաքին:


Բյուջեի եկամուտների 96.2%-ն ապահովվել է հարկերի և տուրքերի, 6.1%-ն այլ եկամուտների և 0.6%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Ընդ որում՝ առավելագույն եկամուտն ապահովվել է ավելացված արժեքի հարկի (35%) և եկամտային հարկի (31.7%) հաշվին: Ծախսերի 96.6%-ը կազմել են ընթացիկ ծախսերը և 3.4%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գոծառնությունների ծախսերը:



Ամբողջ հունվար-հուլիս ժամանակահատվածում պետական բյուջեի եկամուտները կազմել են 633.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ ծախսերը՝ 755.2 մլրդ: Արդյունքում պետական բյուջեի պակասորդը կազմել է 121.8 մլրդ դրամ: 2016թ. հունվար-հուլիսին 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի եկամուտները նվազել են 0.3%-ով: Նշված ժամանակահատվածում 2015թ. համեմատ բյուջեի ծախսերն ավելացել են 2.7%-ով: Ընդ որում՝ 13.7%-ով աճել են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը, 9.1%-ով՝ տնտեսական հարաբերությունների գծով


ծախսերը, 3.7%-ով՝ սոցիալական պաշտպանության ծախսերը, 2.3%-ով առողջապահությանն ուղղված ծախսերը, 0.9%-ով և 0.2%-ով՝ համապատասխանաբար կրթությանն ու մշակույթին ուղղված ծախսերը: Մյուս բոլոր ծախսային հոդվածները դիտարկվող ժամանակահատվածում նվազել են:

Պետական պարտքը 2016թ. հուլիսի դրությամբ կազմել է 5.38 մլրդ ԱՄՆ դոլար, որից 4.49 մլրդ-ը արտաքին և 0.89 մլրդ-ը՝ ներքին: Արդեն տարվա սկզբից մինչև հուլիս ամիսը պետական պարտքն ավելացել է ավելի քան 5.9%-ով:



Դրամավարկային և ֆինանսական հատված

2016թ. երկրորդ եռամսյակում ՀՀ ֆոնդային բորսայում գրանցվել է որոշակի աշխուժացում: Բորսայում կատարված գործարքների թիվը առաջին եռամսյակի 190 հատի համեմատ արդեն երկրորդ եռամսյակում կազմել է 276: Հարկ է նշել, սակայն, որ նախորդ տարվա ընթացքում ընդհանուր գործարքների թիվը կազմել էր 1093 հատ, իսկ այժմ տարվա առաջին կեսին ընդհանուր թիվը դեռևս բավականին ցածր է (ընդհանուր՝ 466 հատ): Գործարքների ընդհանուր ծավալը երկրորդ եռամսյակի ընթացքում առաջին եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 9.76 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 14.64 մլրդ:



Առավելագույն եռամսյակային աճ՝ մոտ 4.87 մլրդ., գրանցել են բաժնետոմսերով գործառնությունները՝ երկրորդ եռամսյակում կազմելով 5.32 մլրդ. ՀՀ դրամ: Պետական պարտատոմսերով գործառնությունների ընդհանուր ծավալն առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 2.97 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 6.31 մլրդ, կորպորատիվ պարտատոմսերով՝ 2.04 մլրդ-ով՝ կազմելով 3.01 մլրդ ՀՀ դրամ, իսկ

ռեպո գործառնությունների ընդհանուր ծավալը երկրորդ եռամսյակում կազմել է 0.12 մլրդ ՀՀ դրամ: Այդպիսով, արդեն երկրորդ եռամսյակում բորսայում կատարված ընդհանուր գործարքների մոտ 36%-ը կազմել են բաժնետոմսերով (նախկին 10%-ի փոխարեն), 43%-ը՝ պետական պարտատոմսերով (1 եռ` 70%), մոտ 20%-ը կորպորատիվ պարտատոմսերով և 1%-ը՝ ռեպո համաձայնագրերով գործարքները:


2016թ. երկրորդ եռամսյակում ՀՀ ներդրումային

կազմակերպությունների կողմից իրականացված գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 477.94 մլրդ ՀՀ դրամ: Առաջին եռամսյակի համեմատ գործարքների ընդհանուր ծավալը նվազել է մոտ 39.5%-ով (միայն ռեպո գործարքների ծավալները նվազել են 36.9%-ով՝ կազմելով 406.69 մլրդ. ՀՀ դրամ):

2016թ. հուլիսին գրանցվել է ՀՀ միջազգային պահուստների աճ՝ մոտ 7.19 մլրդ ՀՀ դրամով: Հունիսին գրանցված 398.2 մլրդ դրամի փոխարեն արդեն հուլիս ամսին միջազգային պահուստները հասել են 405.4 մլրդ դրամի: Նշենք, որ ԶՆԱ (զուտ ներքին ակտիվներ) աճը նշված ժամանակահատվածում կազմել է մոտ 52.69 մլրդ ՀՀ դրամ: ԿԲ-ում ՀՀ Կառավարության միջոցները հուլիսին հունիս ամսվա համեմատ կրճատվել են մոտ 16.25 մլրդ ՀՀ դրամով, իսկ բանկերի միջոցները նույն ժամանակահատվածում ավելացել են մոտ 29.4 մլրդ դրամով:


Արդյունքում փողի բազան հուլիսին կազմել է 836.9 մլրդ դրամ՝ ամսական կտրվածքով ավելանալով մոտ 59.8 մլրդ դրամով: Ընդ որում, բազայի կազմից նշված ժամանակահատվածում մոտ 4.5%-ով ավելացել է ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը (404.6 մլրդ), մոտ 10.9%-ով՝ դրամային թղթակցային հաշիվները (309.1 մլրդ), 7.4%-ով՝ արտարժութային թղթակցային հաշիվները (113.9 մլրդ) և 83%-ով՝ այլ հաշիվները (9.17 մլրդ ՀՀ դրամ):

Փողի զանգվածը հուլիս ամսին հունիսի համեմատ աճելով 80.1 մլրդ դրամով՝ կազմել է մոտ 2,000,983 մլն դրամ: Ընդ որում՝ դրամային ցլախանջ ավանդներն



մլրդ. ՀՀ դրամ	Հն./2016	Հլ./2016	Փոփ.
Ավանդներ	2,010.76	2,080.47	69.71
Ռեզ.	1,581.78	1,642.95	61.17
Դրամային	613.20	618.87	5.67
Արտարժութային	968.58	1,024.09	55.50
Ոչ ռեզ.	428.98	437.52	8.54
Դրամային	67.08	69.52	2.44
Արտարժութային	361.90	368.00	6.10
Վարկեր	2,206.08	2,202.27	-3.82
Ռեզ.	2,060.22	2,057.26	-2.96
Դրամային	697.28	692.05	-5.22
Արտարժութային	1,362.94	1,365.20	2.26
Ոչ ռեզ.	145.87	145.01	-0.86
Դրամային	58.01	60.40	2.39
Արտարժութային	87.86	84.61	-3.25

ամսական կտրվածքով (MoM) ավելացել են 8.7 մլրդ դրամով՝ կազմելով 221.2 մլրդ դրամ, դրամային ժամկետային ավանդները՝ մոտ 1մլրդ դրամով՝ կազմելով 382.6 մլրդ դրամ, իսկ արտարժույթային ավանդները՝ ավելի քան 54.2 մլրդ դրամով՝ կազմելով 1.048 տրլն ՀՀ դրամ: Հարկ է նշել, սակայն, որ նշված ժամանակահատվածում ավանդների



միջին տոկոսադրույքը հունիս ամսվա համեմատ նվազելով 0.44 կետով՝ կազմել է 12.37%: Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ընդհանուր ծավալներն 2016թ. հուլիս ամսին ավելացել են 69.71 մլրդ. ՀՀ դրամով՝ կազմելով 2,080.47 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում, աճի 87%-ն ապահովել են ռեզիդենտներից ներգրավված ավանդները: ՀՀ ռեզիդենտներից ներգրավված դրամային ավանդները նշված ժամանակահատվածում աճել են 5.67 մլրդ ՀՀ դրամով, իսկ արտարժույթային ավանդները՝ 55.5 մլրդ դրամով: 8.54 մլրդ դրամով աճել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալները: Նույն ժամանակահատվածում գրանցվել է տրամադրված վարկերի ընդհանուր ծավալների 3.82 մլրդ դրամով կրճատում: Առավելագույն կրճատումը գրանցվել է ՀՀ ռեզիդենտներին տրամադրված դրամային վարկերի մասով: Չնայած ամսական (MoM) կտրվածքով նման կրճատմանը՝ 2016թ. հուլիսին տարեկան կտրվածքով (2015թ. հուլիսի համեմատ) ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալներն աճել են մոտ 5.56%-ով, իսկ 2016թ. տարվա սկզբից՝ մոտ 4%-ով:

ՀՀ բանկային համակարգի կողմից տրամադրված վարկեր(ըստ տնտեսության առանձին ճյուղերի)/2015-2016թթ:

մլն. ՀՀ դրամ	Հուլիս/2015	Հունիս/2016	Հուլիս/2016
Արդյունաբերություն	397,777	374,675	371,791
Գյուղատնտեսություն	143,316	150,116	147,940
Շինարարություն	120,220	113,545	114,633
Տրանսպորտ և կապ	65,642	63,900	64,812
Առևտուր	340,286	369,216	381,258
Սպասարկման ոլորտ	143,173	184,629	178,096
Սպառողական վարկեր	417,318	426,127	420,990
Հիփոթեքային վարկեր	172,816	178,561	179,848
Այլ	127,238	124,652	126,472

Ներկայացված աղյուսակում նշված են ՀՀ առևտրային բանկերի կողմից տնտեսության առանձին ճյուղերին տրամադրված վարկերի ծավալները: Ինչպես երևում է՝ 2016թ. հուլիսին թե՛ ամսական և թե՛ տարեկան կտրվածքով գրանցվել է առևտրի ոլորտի վարկավորման ծավալների աճ: 2015թ. հուլիսի համեմատ գրանցվել

է 12% աճ, իսկ ընթացիկ տարվա հունիսի համեմատ աճը կազմել է 3.2%: Տարեկան կտրվածքով (YoY) աճել են նաև գյուղատնտեսության և սպասարկման ոլորտների վարկավորման ծավալները, ինչպես նաև ավելացել են սպառողական և հիփոթեքային վարկերի ծավալները: Տարեկան կտրվածքով սպառողական վարկերի աճը կազմել է 0.87%, իսկ հիփոթեքային վարկերն ավելացել են մոտ 4%-ով: Հուլիս ամսին կրճատվել են ՀՀ արդյունաբերության ոլորտի վարկավորման ծավալները: 2015թ. հուլիսի համեմատ արդյունաբերության ոլորտին ուղղված վարկերի ընդհանուր ծավալը նվազել է 25.9 մլրդ ՀՀ դրամով, իսկ ընթացիկ տարվա հունիսի համեմատ՝ 2.8 մլրդ ՀՀ դրամով: Չնայած հունիս ամսվա համեմատ հուլիսին որոշակի աճ գրանցելուն՝ շինարարության և տրանսպորտի ու կապի ոլորտների վարկավորման ծավալները նախորդ տարվա հուլիսի համեմատ կրճատվել են համապատասխանաբար 5.5 մլրդ և 0.83 մլրդ ՀՀ դրամով:

Օգոստոսի 16-ին ՀՀ ԿԲ-ն 0.25 կետով նվազեցրեց դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանելով 7.25%, լումբարդային ռեպո տոկոսադրույքը 8.75% և դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը՝ 5.75%:

Նշենք, որ երկրում դեռևս պահպանվում է գնանկումային միջավայրը: 2016թ. հուլիսին հունիսի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 2.3% գնանկում, ինչը հիմնականում պարենային ապրանքների 4.3% գնանկման արդյունք է: 2016թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.5%, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 0.2 տոկոսային կետով: Այսպիսի պայմաններում տոկոսադրույքի նվազեցումը սպասելի էր, հատկապես որ դեռևս վերջին մի քանի ամիսների ընթացքում արտաքին հատվածից փոխանցված դեֆլյացիոն ռիսկերը պահպանվել են:

2016թ. հուլիսին հունիս ամսվա համեմատ ՀՀ իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավվող դրամային կարճաժամկետ ավանդների միջին տոկոսադրույքները նվազել են համապատասխանաբար 2.3 և 0.1 կետով՝ կազմելով 8.6% և 13.4%: Կարճաժամկետ ավանդներից հուլիս ամսին հունիսի համեմատ աճել է միայն իրավաբանական անձանցից ներգրավվող արտարժույթային ավանդների միջին տոկոսադրույքը՝ կազմելով 4.8%:

Իրավաբանական անձանցից ներգրավվող 1 տարուց ավելի ժամկետայնությամբ դրամային ավանդների միջին տոկոսադրույքը նշված ժամանակահատվածում նվազել է 1.7 տոկոսային կետով՝ կազմելով 13.4%, իսկ ֆիզիկական անձանցից՝ 0.1 կետով՝ կազմելով 13.3%: Թե՛ իրավաբանական և թե՛ ֆիզիկական անձանցից ներգրավվող 1 տարուց ավելի ժամկետայնությամբ արտարժույթային ավանդների տոկոսադրույքներն աճել են:

Հուլիս ամսվա ընթացքում հունիսի համեմատ գրանցվել է կարճաժամկետ վարկերի միջին տոկոսադրույքների աճ. բացառություն է կազմում միայն ֆիզիկական անձանցից ներգրավվող արտարժույթային կարճաժամկետ վարկերի տոկոսադրույքը, որը նվազելով 0.7 կետով կազմել է 14.1%:


Արտաքին հատված

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2016թ հունվար-հուլիսին կազմել է 2.6մլրդ ԱՄՆ դոլար (1,3 տրլն դրամ)՝ տարեկան կտրվածքով աճելով 2.3%-ով: Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների տարեկան աճը կազմել է 16.5%՝ մինչև 969 մլն դոլար (467.5 մլրդ դրամ) ծավալը, իսկ ներմուծման ծավալները կրճատվել են 4.4%-ով՝ մինչև 1, 7 մլն ԱՄՆ դոլար (816 մլրդ դրամ):

Աղյուսակ. ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշներ, 2016թ			
	Հուլիս	Հուլիս	Հունվար-հուլիս
	Փոփոխությունը 2015թ հուլիսի նկատմամբ, %	Փոփոխությունը 2016թ հունիսի նկատմամբ, %	Փոփոխությունը 2015թ հվ-հուլիսի նկատմամբ, %
Արտահանում	13.2	-3.3	16.5
Ներմուծում	-9	-9.5	-4.4
Առևտրաշրջանառություն	-1.3	-7.1	2.3


Միայն 2016թ հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը նվազել է 1.3%-ով (YoY)՝ հասնելով 382.8մլն ԱՄՆ դոլարի, որի կազմում արտահանումն ավելացել է 13.2%-ով՝ հասնելով 150.9մլն դոլարի, իսկ ներմուծումը կրճատվել է 9%-ով՝ կազմելով 231.9մլն դոլար:

2016թ հունիս ամսվա նկատմամբ հուլիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը նվազել է 7.1%-ով (MoM): Այդ թվում ներմուծման ծավալները կրճատվել են 9.5%-ով, իսկ արտահանման ծավալները՝ 3.3%-ով: Առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն հունիս



ամսվա -100.2մլն դոլար ցուցանիշից հուլիսին բարելավվել է 19%-ով՝ կազմելով -81 մլն դոլար:²

2015թ հունվար-հուլիսի նկատմամբ 2016թ հունվար-հուլիսին ՀՀ առևտրային գործընկերների շարքում բացարձակ արժեքով առավելագույն աճը գրանցել է ՀՀ առևտրաշրջանառությունը ՌԴ-ի (67.9մլն ԱՄՆ դոլարով), Բուլղարիայի (57.5մլն ԱՄՆ դոլարով), Վրաստանի (50.9մլն ԱՄՆ դոլարով) և ԱՄԷ հետ (16մլն ԱՄՆ դոլարով): Նույն ժամանակահատվածում առավել մեծ չափով կրճատվել է Չինաստանի (51.8մլն ԱՄՆ դոլարով), ԱՄՆ (29.9մլն ԱՄՆ դոլարով), Իրանի (18.8մլն ԱՄՆ դոլարով) և Իտալիայի (16.6մլն ԱՄՆ դոլարով) հետ առևտրաշրջանառությունը:



Արտահանման գծով ՀՀ առաջատար գործընկերներն են ՌԴ-ը (20.3%), Բուլղարիան (9.4%), Վրաստանը (8.9%) և Գերմանիան (8%): Դեպի ՌԴ արտահանման ծավալները տարեկան կտրվածքով աճել են 71.8%-ով (YoY): ՀՀ ներմուծման առավել մեծ ծավալները (ըստ առևտուր անող երկրի հատկանիշի) բաժին են ընկնում ՌԴ-ին (21.0%), Վրաստանին (7.6%), ԱՄԷ-ին (5.7%), և Իրանին (5.2%):

2016թ հունվար-հուլիսին ՀՀ արտահանման ծավալների կրճատմանն առավելապես նպաստող հոդվածներն էին «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (-21.3մլն ԱՄՆ դոլար), «հանքահումքային արտադրանք» (20.6մլն ԱՄՆ դոլար) և «տրանսպորտային միջոցներ» (672հզ ԱՄՆ դոլար) հոդվածները:

Ներմուծման ծավալների կրճատումը տեղի է ունեցել ոչ թանկարժեք մետաղների և դրանցից իրերի ներմուծման 36.3 մլն դոլարով, հանքահումքային արտադրանքի 34.5 մլն դոլարով և բուսական ծագման արտադրանքի ներմուծման 31 մլն դոլարով կրճատման հաշվին:


2016թ հունիսի 16-ից հուլիսի 16-ն ընկած ժամանակահատվածում հայկական բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ՀՀ փոխանցված դրամական միջոցների ծավալը կազմել է 145.6 մլն ԱՄՆ դոլար: 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ վերջինս նվազել է մոտ 19%-ով, իսկ նախորդ ամսվա ցուցանիշի նկատմամբ աճը կազմել է 7.6%:

² Հունիս ամսվա տվյալները ՀՀ ԱՎԾ կողմից վերանայվել են նվազման ուղղությամբ

Դրամական միջոցների զուտ ներհոսքը հունիսի նկատմամբ ավելացել է 10%-ով՝ հաջորդելով հունիսյան 93% աճին (MoM) և կազմելով 89.2մլն ԱՄՆ դոլար: Այդ թվում՝ ՌԴ-ից զուտ ներհոսքն ավելացել է 10.7%-ով, իսկ ԱՄՆ-ից՝ մոտ 0.8%-ով (MoM):

Նախորդ տարվա հուլիսի նկատմամբ զուտ ներհոսքը կրճատվել է 22%-ով՝ նույնպես առավելապես ՌԴ-ից

փոխանցումների կրճատման հետևանքով (23% YoY): 2015թ նույն ժամանակահատվածում նույնպես նշված ցուցանիշը կազմել էր 22% (YoY):



ՀՀ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ. ՀՈՒԼԻՍ 2016

Ցուցանիշ	2016թ հուլիս	Փոփոխություն		2016թ հվ-հուլիս	Փոփոխություն
		YoY(%)	MoM(%)		YoY (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %	X	-4.3	2.5	X	3.0
Արդյունաբերական արտադրանք, <i>մլրդ դրամ</i>	117.7	2.8	-6.2	777.4	7.9
Գյուղատնտեսական արտադրանք, <i>մլրդ դրամ</i>	89.7	-3.8	50.6	344.0	1.3
Շինարարության ծավալ, <i>մլրդ դրամ</i>	33.6	-6.8	-3.5	158.7	-7.6
Առևտրաշրջանառություն, <i>մլրդ դրամ</i>	200.5	-1	3.5	1174	-0.4
Ծառայությունների ծավալ, <i>մլրդ դրամ</i>	107.0	4.6	-4	690.1	7.6
ՍԳԻ. հուլիս, %	X	-1.3	-2.3	X	-1.5
օգոստոս	X	-1.9	-0.5	X	-1.6
Միջին ամսական անվանական աշխատավարձ, <i>դրամ</i>	195,791	-0.5	6.9	184,987	2.3
Արտաքին առևտրաշրջանառ., <i>մլն ԱՄՆ դոլար</i>	382.8	-1.3	-7.1	2658.8	2.3
արտահանում	150.9	13.2	-3.3	969.0	16.5
ներմուծում	231.9	-9	-8.5	1689.8	-4.4
Դրամական միջոցների զուտ ներհոսք, <i>մլն ԱՄՆ դոլար</i>	89.2	-22	10	X	X
ՀՀ պետական պարտք, <i>մլրդ ԱՄՆ դոլար</i>	5.38	14	0.7	X	X
արտաքին պարտք	4.5	11.6	0.5	X	X
	2016թ I եռամսյակ	YoY		QoQ	
ՀՆԱ, մլն դրամ	898,895.8	4.5		-2.9	
	2016թ II եռամսյ.				
	1128,072.6	1.5		+23.9	




Մեպտեմբեր 2016

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ




ԱՄՆ Կոմերցիայի դեպարտամենտի Տնտեսական վերլուծությունների բյուրոյի կողմից հրապարակված՝ առաջին անգամ վերանայված տվյալների համաձայն 2016թ երկրորդ եռամսյակում ԱՄՆ իրական ՀՆԱ-ի աճը կազմել է 1.1% (QoQ)՝ 0.1 կետով նվազելով նախնական գնահատականից: Տարվա առաջին եռամսյակում գրանցվել է ՀՆԱ-ի 0.8% աճ: ՀՆԱ-ի աճին նպաստող հիմնական գործոնը սպառողական ծախսերի աճն էր (4.2% QoQ):



Հունիս ամսին նախորդ ամսվա նկատմամբ բնակչության անձնական եկամուտներն աճել են 0.3%-ով (MoM) (նախկինում գնահատված 0.2% ցուցանիշը վերանայվել է աճի ուղղությամբ): Հուլիսին աճը կազմել է 0.4% (MoM): Անձնական տնօրինվող եկամուտները նույնպես աճել են 0.4%-ով՝ գերազանցելով հունիսյան 0.3% աճը (MoM):

Բարձր տվյալ են գրանցել նաև անձնական ծախսերի հուլիսյան ցուցանիշները:




Վերջիններս աճել են 0.3%-ով (MoM)՝ հաջորդելով հունիսյան 0.5% աճին: Վերջինս, իր հերթին, նույնպես վերանայվել է աճի ուղղությամբ՝ նախկինում գնահատված 0.4%-ի (MoM) փոխարեն: Սակայն նշենք, որ սպառման ծավալների աճը տեղի է ունեցել ավտոմեքենաների գնումների և սեզոնայնությամբ պայմանավորված եղանակային տաք պայմաններում:


Էլեկտրաէներգիայի վրա կատարվող ծախսերի աճով: Մարտ ամսից հետո առաջին անգամ բնակչության եկամուտների աճի տեմպը գերազանցել է սպառման աճի տեմպերը, ինչը նշանակում է, որ սպառողներն առավել հակված են խնայելու:

Բարձր ցուցանիշների ֆոնին ակնկալվում է, որ տարվա երրորդ քառորդում նույնպես երկրի ՀՆԱ-ի աճի հիմքը կլինի անձնական սպառումը:

ԱՄՆ Մարդահամարի բյուրոյի տվյալների համաձայն հուլիս ամսին երկրում մանրածախ առևտրի ծավալները նախորդ ամսվա նկատմամբ փոփոխություն չեն կրել՝ 0.0% (MoM)՝ հաջորդելով հունիսյան 0.8% աճին: Վերջինս, իր հերթին, վերանայվել է նախկինում գնահատված 0.6%-ից: Առանց ավտոմեքենաների վաճառքի ցուցանիշների՝ վաճառքի ծավալները (Core) հուլիսին կրճատվել են 0.3%-ով (MoM)՝ հաջորդելով հունիսյան 0.9% աճի ցուցանիշին: Վերջինս նույնպես նախապես գնահատված 0.7%-ից հետո վերանայվել է աճի ուղղությամբ:




Որպես հետևանք զսպված են եղել հուլիս ամսվա գնաճի ցուցանիշները: ԴՊՀ համար առավել նախընտրելի՝ անձնական սպառման ապրանքների գնային Core ինդեքսը հուլիս ամսին աճել է միայն 0.1%-ով (MoM), ինչպես հունիսին՝ տարեկան աճը պահպանելով 1.6% մակարդակում, ինչը թեև հեռու չէ ԴՊՀ նպատակային 2%-ից, սակայն, այնուամենայնիվ, չի հասնում վերջինիս: ԱՄՆ ՍԳԻ-ն հուլիսին փոփոխություն չի կրել՝ 0.0%(MoM)՝ հաջորդելով հունիսյան 0.2% աճին: Առանց սննդամթերքի և էներգետիկ ոլորտի արտադրանքի գները հաշվի առնելու՝ Core ՍԳԻ-ն ամսական կտրվածքով աճել է 0.1%-ով՝ զիջելով նախորդ ամսվա 0.2% աճի ցուցանիշը:



Նախորդ տարվա հուլիսի նկատմամբ ՍԳԻ-ն ավելացել է 0.8%-ով (YoY)՝ նույնպես զիջելով նախորդ ամսվա 1% և սպասված 0.9% աճի ցուցանիշները: Core ինդեքսը տարեկան կտրվածքով աճել է 2.2%-ով (YoY), ինչը զիջում է սպասված և նախորդ ամսում գրանցված 2.3% ցուցանիշը:

Ըստ ԱՄՆ Առաջարկի մենեջմենթի ինստիտուտի (ISM) գնահատականների՝ երկրում գործարար ակտիվության աճի տեմպերը հուլիսին նվազել են: Ոչ արդյունաբերական ոլորտում (ծառայությունների) գործարար ակտիվության ինդեքսը




գրանցել է 55.5 արժեքը՝ զիջելով ինչպես նախորդ ամսվա 56.5, այնպես էլ սպասված 56.0 ցուցանիշներին: Ոլորտում նոր պատվերների ինդեքսն ավելացել է 0.4 կետով՝ մինչև 60.3 գործակիցը, իսկ զբաղվածության ինդեքսը՝ նվազել 1.3 կետով՝ կազմելով 51.4: 50 գործակցից բարձր արժեքները նշանակում են գործարար ակտիվության աճ: Աճն

արձանագրվել ծառայությունների 15 ենթաոլորտներում:

Արդյունաբերության ոլորտում ISM-ի գործարար ակտիվության PMI ինդեքսը հուլիս ամսին հունիսի 53.2-ից նվազել է մինչև 52.6: Ոլորտում նոր պատվերների ինդեքսը նվազել է 0.1 կետով՝ կազմելով 56.9, զբաղվածության ինդեքսը՝ 1.0 կետով՝ կազմելով 49.4:

Երկրի ընդհանուր տնտեսական իրադրությունը բնութագրող կարևոր ցուցանիշներ են նաև անշարժ գույքի շուկայի վերաբերյալ տվյալները, քանի որ բնակելի տարածքի առքը ենթադրում է նաև մի շարք կենցաղային և այլ ապրանքների ու ծառայությունների նկատմամբ պահանջարկ: Այսպես, ԱՄՆ Ռիելթորների ազգային ասոցիացիայի տվյալների համաձայն ոչ նորակառույց բնակելի անշարժ գույքի վաճառքի ծավալները նախորդող չորս ամիսների ընթացքում գրանցված անընդմեջ աճից հետո հուլիս ամսին կրճատվել են 3.2%-ով՝ կազմելով 5.39մլն միավոր հունիսյան 5.57մլն-ից հետո: Ցածր պահանջարկի պատճառով շուկայում մատչելի անշարժ գույքի պակասն է: Անշարժ գույքի շուկան չի կարողանում իրացնել իր ողջ պոտենցիալը, քանի որ անկախ հիփոթեքային տոկոսադրույքների պատմականորեն ցածր մակարդակից ոչ բավարար առաջարկն ու շինարարության տեմպերի անհամապատասխանությունն առկա բարձր պահանջարկին զսպում են պոտենցիալ գնորդներին: Թեև նոր կառուցվող բնակելի անշարժ գույքի քանակը նախորդ ամսվա ցուցանիշի նկատմամբ հուլիսին 2.1%(MoM) աճ է գրանցել՝ կազմելով 1.211մլն միավոր, իսկ հունիսյան տվյալը վերանայվել է աճի ուղղությամբ՝ 5.1% 4.8%-ի փոխարեն, աճի տեմպերի շարժի ընդհանուր միտումը նվազումն է:

Կառավարության կողմից տրամադրված շինարարության թույլտվությունների քանակը հուլիս ամսին նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.1%-ով՝ հաջորդելով հունիսյան 1.5%(MoM) աճին և կազմելով 1.152մլն: Նշենք, որ վերջինս նաև հանդիսանում է կարևոր ցուցանիշ դատելու համար մոտ ապագայում երկրի տնտեսության սպասվող վիճակի մասին, քանի որ շինարարությունը կապված է մի շարք այլ տնտեսական գործընթացների՝ ֆինանսավորման, զբաղվածության աճի հետ:




Օգոստոսի 26-ին ԱՄՆ-ում ամենամյա միջազգային ֆինանսական սիմպոզիումի շրջանակներում տեղի ունեցավ ԴՊՀ նախագահ Ջ.Յելլենի ելույթը, որի ժամանակ վերջինս նշեց, որ վերջին ամիսներին ավելացել են դրամավարկային քաղաքականության խստացման օգտին խոսող գործոնները: Ջ.Յելլենը հայտարարեց, որ ԴՊՀ-ն հիմնվում է այն կանխատեսումների վրա, որ ԱՄՆ ՀՆԱ-ն կայուն տեմպերով աճելու է, աշխատանքի շուկայում դրական զարգացումները շարունակվելու են, իսկ մոտակա տարիներին գնաճը երկրում կհասնի ԴՊՀ նպատակային մակարդակին: Ուստի ԴՊՀ Դաշնային բաց շուկայական գործառնությունների կոմիտեն նպատակահարմար է համարում տոկոսադրույքների աստիճանական բարձրացումը: Ըստ Ջ.Յելլենի՝ ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացումը կախված կլինի նրանից, թե որքանով ճշգրիտ կլինեն ԴՊՀ կանխատեսումները:


Ջ.Յելլենի ելույթից օրեր անց, սակայն, ԱՄՆ Աշխատանքի դեպարտամենտի կողմից հրապարակվեցին օգոստոսին երկրում զբաղվածության մակարդակը բնութագրող ոչ օպտիմիստական տվյալներ: Հաջորդելով հուլիսյան սպասվածից ավելի բարձր աճին (275հզ-ով)՝ օգոստոսին ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թվաքանակը երկրում ավելացել է 151 հզ-ով՝ զիջելով սպասված 180հզ-ով աճի ցուցանիշը: Գործազրկության մակարդակը պահպանվել է նախորդ ամսվա 4.9% մակարդակում: Գործազրկության աճի հետ մեկտեղ միջին ժամային աշխատավարձը երկրում օգոստոսին ավելացել է ընդամենը 0.1%-ով (MoM)՝ հաջորդելով հուլիսյան 0.3% աճին: Վերջինս էական նշանակություն ունի սպառողական ծախսերի հետագա դինամիկայի վերաբերյալ սպասումների ձևավորման գործում:

Թեև աշխատանքի շուկայի օգոստոսյան ցածր ցուցանիշներն իրենց հերթին կարող են նվազեցնել ԴՊՀ սեպտեմբերյան նիստի արդյունքում ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը, հարկ է հաշվի առնել նաև վերջին երկու տասնամյակներին օգոստոս ամսին ԱՄՆ աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշները, որոնք դրսևորել են բավականին հետաքրքրական դինամիկա. վերջին 18 տարիների ընթացքում 14 անգամ աշխատանքի շուկայի օգոստոսյան ցուցանիշները սպասվածից ցածր արժեքներ են գրանցել: Ավելին, եթե դիտարկենք վերջին 25 տարիների տվյալները, ապա, ի տարբերություն բոլոր մյուս ամիսների, օգոստոսին նոր ստեղծվող աշխատատեղերի ցուցանիշները պատմականորեն նվազագույնն են եղել:

Պատճառն այն է, որ արձակուրդային ակտիվ սեզոնի հետևանքով օգոստոսի նախնական տվյալները հաճախ խեղաթյուրվում են: Արդյունքում, ցածր են ստացվում միայն նախնական տվյալները, իսկ վերանայվածները շատ ավելի բարձր են լինում: Ուստի, 2016թ օգոստոսի համար ստացված սպասվածից ցածր ցուցանիշները, ելնելով իրենց պատմական դինամիկայից, հարկ չէ հիմք ընդունել սեպտեմբերյան նիստում ԴՎՔ բազային տոկոսադրույքի շարժի վերաբերյալ կանխատեսումներ կատարելու համար:



Գրաֆիկ. Օգոստոսին զբաղվածների թվաքանակի շարժի ցուցանիշներ. 1999-2015



ԵՄ տնտեսությունը 2016թ. երկրորդ եռամսյակի ընթացքում գրանցել է 0.3% եռամսյակային (QoQ) և 1.6% տարեկան (YoY) աճ: ՀՆԱ աճի նման տեմպեր գրանցվում են արդեն չորրորդ եռամսյակն անընդմեջ: ԵՄ խոշորագույն տնտեսությամբ երկրում՝ Գերմանիայում, 2016թ երկրորդ քառորդում առաջին քառորդի նկատմամբ երկրի ՀՆԱ-ն ավելացել է 0.4%-ով (QoQ), ինչպես և ներկայացնում էին նախնական տվյալները: Սակայն աճի տեմպը դանդաղել է առաջին քառորդում գրանցված 0.7% աճից հետո: 2015թ երկրորդ քառորդի նկատմամբ աճը կազմել է 3.1% (YoY)՝ հաջորդելով առաջին քառորդի 1.5% աճի ցուցանիշին:


Գերմանիայի ՀՆԱ-ի աճի հիմնական խթանն էին արտահանման ծավալների, մասնավոր սպառման և պետական ծախսերի աճը: 2016թ առաջին քառորդի նկատմամբ երկրի արտահանման ծավալներն աճել են

1.2%-ով, իսկ ներմուծումը կրճատվել 0.1%-ով: Պետական ծախսերն ավելացել են 0.6%-ով՝ տնտեսական աճին նպաստելով 0.1 կետով: Ներքին առևտրի ծավալների աճն, իր հերթին, ՀՆԱ-ի աճին նպաստեց 0.6 կետով, այդ թվում՝ սպառողական ծախսերն ապրիլ-հունիսին ավելացան 0.2%-ով՝ ՀՆԱ-ի աճին նպաստելով 0.1 կետով:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ օգոստոս ամսվա ընթացքում ԵՄ տնտեսությունը բնութագրվում է առավելապես բացասական տեղաշարժերով: Մասնավորապես, որոշակի պասիվացում է գրանցվել արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում:

Markit հետազոտական ընկերության տվյալների համաձայն Եվրագոտու 19 երկրների արդյունաբերության և ծառայությունների ոլորտների ընդհանրական բաղադրյալ PMI ինդեքսն օգոստոսին նվազել է՝ հասնելով վերջին 19 ամիսների մինիմումին՝ 52.9 գործակցին: Հուլիսին գրանցվել էր ինդեքսի 53.3 արժեք: Թեև 50.0-ից բարձր գործակցիցները ենթադրում են նշված ոլորտներում ակտիվության աճ, սակայն նախորդ ամիսների համեմատ աճի տեմպերը նվազել են:

Եվրագոտու ծառայությունների ոլորտում գործարար ակտիվության PMI ինդեքսը հուլիսյան 53.1-ից նվազել է մինչև 52.8: Վերամշակող արդյունաբերության ոլորտի PMI ինդեքսը նախորդ ամսվա 52 արժեքի փոխարեն օգոստոսին գրանցել է 51.7 արժեք:



Եվրոպական ինդեքսների նվազմանը մեծապես նպաստել է Գերմանիայի համապատասխան ինդեքսների անկումը: Օգոստոսին Գերմանիայում գործարար ակտիվության PMI ինդեքսը հուլիսյան 55.3 ցուցանիշից նվազել է մինչև 53.3: Երկրի ծառայությունների ոլորտի PMI-ը հուլիսյան 54.4-ից նվազել է մինչև 51.7 գործակիցը՝ զիջելով նաև նախնական գնահատված 53.3 գործակցին: Միևնույն ժամանակ, Մեծ Բրիտանիայում ծառայությունների ոլորտի PMI ինդեքսը հուլիսյան 47.4-ից օգոստոս ամսին բարձրացել է մինչև 52.9 գործակիցը՝ ինդեքսի հաշվարկման առաջին օրվանից ի վեր գրանցելով առավելագույն աճը և գերազանցելով սպասված 50.0 գործակիցը: Երկրում գործարար ակտիվության բաղադրյալ PMI ինդեքսն օգոստոսին կազմել է 53.6՝ գերազանցելով հուլիսյան 47.6 գործակիցը:

Օգոստոս ամսին 100.1 գործակից է գրանցել Գերմանիայի բիզնես միջավայրի սպասումների ինդեքսը: Ifo Business Climate Index-ը օգոստոս ամսին կազմել է 106.2 գործակից նախկին 108.3-ի փոխարեն: Բիզնես միջավայրի սպասումների ինդեքսը, հանդիսանալով Ifo Business Climate Index-ի ենթաինդեքսներից մեկը, արտացոլում է առաջիկա 6 ամիսների ընթացքում երկրի բիզնես միջավայրի զարգացումների վերաբերյալ սպասումները: Փետրվար ամսից մինչև հունիս ամիսն անընդհատ աճելուց հետո արդեն վերջին երեք ամիսներին ինդեքսը սկսել է դրսևորել նվազման դինամիկա՝ արտացոլելով բիզնես միջավայրի դրական տեղաշարժերի սպասումների նվազումը:

Նվազել է նաև Գերմանիայի բիզնես միջավայրի ընթացիկ պայմանների ինդեքսը՝ նախկին 114.8 և կանխատեսվող 114.9 գործակցի փոխարեն կազմելով 112.8 գործակից: Նման ցածր արժեք ինդեքսը վերջին անգամ գրանցել էր 2015թ. դեկտեմբերին:

Օգոստոսին ԵՄ տարածքում պահպանվել է ցածր գնաճային միջավայրը: Նախնական տվյալների համաձայն ԵՄ սպառողական գների աճը կազմել է 0.2%, ինչը համապատասխանում է հուլիսին գրանցված աճի ցուցանիշին: Առանց էներգակիրների, ալկոհոլի և ծխախոտի գների հաշվարկված Core UԳԻ-ն նախնական տվյալներով օգոստոսին կազմել է 0.8%, ինչը 0.1 կետով զիջում է նախորդ երկու ամիսներին գրանցված գնաճի ցուցանիշներին:

Ի տարբերություն ընդհանուր ԵՄ գնաճի տվյալների՝ սպասվածից դրական արդյունքներ են գրանցվել Մեծ Բրիտանիայի գնային միջավայրում: Վերջին տվյալներով հուլիս ամսին որոշ չափով ավելացել են տարեկան գնաճի տեմպերը: Քանի որ տվյալները վերաբերում են հետբրեքսիթյան ժամանակահատվածին, ներդրողների մեծ մասը սպասում էր, որ դրանք կլինեն առավելապես բացասական, սակայն փաստացի տվյալներն այլ պատկեր ցույց տվեցին: Մասնավորապես, սպառողական գները հուլիս ամսվա ընթացքում 2015թ. հուլիսի համեմատ սպասվող 0.5%-ի փոխարեն աճել են 0.6%-ով (չնայած, որ UԳԻ ամսական MoM փոփոխությունը

կազմել է -0.1% նախկին +0.2%-ի փոխարեն): Հուլիսին թե՛ ամսական (MoM) և թե՛ տարեկան (YoY) կտրվածով աճել են արդյունաբերողների վաճառքների գները (Core)՝ համապատասխանաբար կազմելով 0.4% (նախկին և կանխատեսվող 0.1%-ի փոխարեն) և 1% (նախկին 0.7%-ի փոխարեն): Մանրածախ առևտրի գների MoM փոփոխությունը հուլիսին կազմել է 0.1% նախկին 0.4%-ի և կանխատեսվող -0.1%-ի փոխարեն, իսկ տարեկան YoY փոփոխությունը՝ 1.9%՝ նախկին 1.6%-ի փոխարեն:

Օգոստոսին սպասվածից բարձր աճ են գրանցել Մեծ Բրիտանիայի մանրածախ առևտրի ծավալները: Ամսական կտրվածքով աճը կազմել է 1.4%՝ հաջորդելով հունիսյան 0.9% անկմանը: Տարեկան կտրվածքով աճը կազմել է 5.9% (YoY)՝ հաջորդելով հունիսյան 4.3% աճին: Core մանրածախ առևտրի ծավալները, որոնք բացառում են ավտոմեքենաների և էներգակիրների գները, հուլիս ամսին ավելացել են 1.5%-ով (MoM)՝ հաջորդելով հունիսյան 0.9% անկմանը, իսկ տարեկան կտրվածքով աճը կազմել է 5.4%(YoY)՝ հունիսյան 3.9% աճից հետո:

Հրապարակված ցուցանիշներն առաջին պաշտոնական տվյալներն են, որոնք արտացոլում են հունիսի 23-ին կայացած հանրաքվեից հետո բրիտանացիների շրջանում սպառողական պահանջակի մակարդակը: Մանրածախ առևտրի ծավալների աճին մեծապես նպաստել են եղանակային տաք պայմաններն ու ֆուտի փոխարժեքի անկումը, որը խթանեց օտարերկրյացիների կողմից երկրում սպառողական ծախսերի աճը, հատկապես՝ թանկարժեք իրերի գնումների հաշվին:

Նշենք, որ մանրածախ առևտրի ծավալների շարժը բավականին տատանողական է, և Brexit-ից հետո սպառողական ծախսերի իրական վիճակի մասին պատկերացում կազմելու համար ավելի քան մեկ ամսվա տվյալներ են անհրաժեշտ: ԵՄ կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու որոշման ֆոնին Անգլիայի Բանկն ավելի քան 50%-ով նվազեցրել է հաջորդ երկու տարիների համար սպառողական ծախսերի իր կանխատեսումները, քանի որ աշխատավարձերի աճի տեմպերի թուլացումն ու ուժգնացող ինֆլյացիան զսպում են սպառողական ծախսերը: 2017թ. և 2018թ. համար կանխատեսվում է սպառողական ծախսերի՝ համապատասխանաբար 1% և 0.75% աճ:

Մեծ Բրիտանիայի ֆինանսական հատվածը բնութագրող վերջին ցուցանիշներն ընդհանուր առմամբ խոսում են որոշակի բացասական տեղաշարժերի մասին: Մասնավորապես, զուտ վարկավորման ծավալներն ավելացել են 3.8 մլրդ. ֆունտով այն դեպքում, երբ նախկին տվյալներով աճը կազմել էր 5.1 մլրդ. և կանխատեսվում էր 4.9 մլրդ. ֆունտով աճ: Անգլիայի Բանկի տվյալներով հուլիս ամսին նվազել են հիփոթեքային վարկավորման ծավալների աճի տեմպերը: Նախորդ ամսվա 3.2 մլրդ. ֆունտով աճից հետո արդեն հուլիսին գրանցվել է ընդամենը 2.7 մլրդ. ֆունտով աճ: Հիփոթեքային վարկի հաստատված դիմումների թիվը հուլիսին նախորդ ամսվա համեմատ նվազել է սպասվածից ավելի մեծ չափով՝ կազմելով 60.91 հազար:

Նշենք, որ նախորդ ամսվա 65.65 հազարի ցուցանիշը վերանայվել է՝ փոխարինվելով 64.15 հազարով: Հաստատված դիմումների թիվն արդեն նվազում է երկրորդ ամիսը շարունակ, ընդ որում՝ նման տենդենցը մայիս ամսին հակառակ ընթացք ստանալուց հետո կրկին վերսկսվել է հունիս ամսից, երբ Մեծ Բրիտանիայում տեղի ունեցավ ԵՄ կազմից դուրս գալու հանրաքվեն (Brexit): Նախորդ ամսվա համեմատ զգալիորեն նվազել են սպառողական վարկերի ծավալների աճի տեմպերը՝ նախկին 1.857 մլրդ ֆունտից հասնելով 1.181 մլրդ-ի:

Վերջին ամիսներին ԵԿԲ-ի գործողությունները հանգեցրել են ԵՄ տարածքում կորպորատիվ պարտատոմսերի եկամտաբերության նվազման: Ընթացիկ տարվա հունիս ամսից մեկնարկեց ԵԿԲ կողմից կորպորատիվ պարտատոմսերի գնման ծրագիրը՝ հանգեցնելով վերջիններիս նկատմամբ պահանջարկի աճին ու, հետևաբար, դրանց եկամտաբերության նվազմանը: Մինչ ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսը Բանկը ձեռք է բերել մոտ 20.5 մլրդ եվրո ընդհանուր ծավալով կորպորատիվ պարտատոմս: Ու թեև եկամտաբերության նվազումն այս պայմաններում բացատրելի է, ներդրողներն այս երևույթին զգուշավորությամբ են մոտենում: Սակայն, հարկ է նշել, որ ներդրողների համար ընտրության հնարավորությունները սահմանափակ են՝ հաշվի առնելով շատ դեպքերում պետական պարտատոմսերի առավել ցածր եկամտաբերությունն ու կանխիկ գումար պահելու ծախսերը:

Tradeweb ֆինանսական ընկերության գնահատականներով սեպտեմբերի 5-ի դրությամբ Եվրագոտու շուկայում շրջանառվում էր բացասական եկամտաբերությամբ շուրջ 706մլրդ եվրո ծավալով կորպորատիվ պարտատոմս: Վերջինս կազմում է ողջ շուկայի ավելի քան 30%-ը: Համեմատության համար նշենք, որ հունվարյան ցուցանիշը կազմում էր մոտ 5%: Սակայն, այս պարտատոմսերի վաճառքի դեպքերը դեռևս այնքան էլ շատ չեն: Բացի Henkel և Sanofi ընկերություններից բացասական եկամտաբերությամբ պարտատոմսեր են տեղաբաշխել նաև բրիտանական British Petroleum-ը, գերմանական BMW AG-ն և երկաթուղային ցանցի պետական օպերատոր Deutsche Bahn AG-ն:

ԵԿԲ կողմից անցկացված վերջին հարցման արդյունքներով ընկերությունները դրամական միջոցներ են ներգրավում ցածր տոկոսադրույքների առավելություններից օգտվելու, նախկին պարտավորությունները մարելու, պահուստների ստեղծման, շրջանառու կապիտալի ավելացման կամ որոշակի գործարքներ կնքելու նպատակով: Մինչդեռ հիմնական կապիտալում ներդրումներ կատարելու նպատակով ներգրավվող փոխառու միջոցները տարվա II քառորդում կրճատվել են: Ներդրումների հաշվին գործունեության ընդլայնման համար ընկերություններն ունեն տնտեսական օպտիմիստական կանխատեսումների և կարճաժամկետում ռիսկերի կրճատման կարիք:

Չինաստան

Չինաստանի Ազգային վիճակագրության ծառայության կողմից հրապարակված տվյալների համաձայն 2016թ. հուլիսին 2015թ. հուլիսի համեմատ արդյունաբերական արտադրանքի ծավալները երկրում աճել են ընդամենը 6%-ով այն դեպքում, երբ նախորդ ամիս գրանցվել էր 6.2% աճ և կանխատեսվում էր աճի 6.1% արժեք: Նվազել են նաև Չինաստանի մանրածախ առևտրի ծավալների տարեկան աճի տեմպերը: Հուլիս ամսվա ընթացքում մանրածախ առևտրի ծավալներն աճել են 10.2%-ով, ինչը 0.3 կետով զիջում է աճի կանխատեսվող արժեքը և 0.4 կետով՝ հունիս ամսվա ընթացքում 2015թ. հունիսի համեմատ գրանցված աճի ուցանիշը:


Չնայած հուլիսին արդյունաբերական արտադրանքի ծավալների աճի տեմպերի նվազմանը՝ օգոստոս ամսվա ընթացքում Չինաստանի արդյունաբերության ոլորտում գրանցվել է որոշակի աշխուժացում: Սահմանային 50 արժեքից մինչև 49.9 արժեք նվազելուց հետո արդյունաբերական ոլորտի PMI ինդեքսն արդեն օգոստոսին գրանցել է 50.4 արժեք այն դեպքում, երբ որևէ փոփոխություն չէր սպասվում: Սա 2014թ. հոկտեմբերից հետո երկրի արդյունաբերական ոլորտի PMI ինդեքսի գրանցած առավելագույն արժեքն էր, ինչը խոսում է ոլորտի զգալի աշխուժացման մասին: Ոչ արդյունաբերական ոլորտում, սակայն, նախորդ ամսվա 53.9 գործակցի փոխարեն օգոստոսին գրանցվել է PMI ինդեքսի 53.5 արժեք: Սա նշանակում է, որ չնայած դեռևս ինդեքսը պահպանվում է սահմանային 50 միավորից բարձր մակարդակում, այնուամենայնիվ նախորդ ամիսների համեմատ նկատվում է որոշակի պասիվացում:

Չինաստանի իշխանությունները պատրաստվում են մասշտաբային բարեփոխումներ իրականացնել երկրի նավթագազային ոլորտում: Նախատեսվում են նավթի առաջարկի հետ կապված կառուցվածքային փոփոխություններ, նավթագազային կազմակերպությունների վերակազմակերպումներ և ընդհանուր նավթագազային արդյունաբերությունում այլ համակարգային փոփոխություններ: Նման որոշմանը երկրի իշխանությունները հանգել են նավթի գների անկման պայմաններում 2016թ. ընթացքում 3 ազգային նավթագազային գիգանտների՝ վատագույն ֆինանսական արդյունքներ գրանցելուց հետո: 2016թ. առաջին կիսամյակի հաշվետվությունների համաձայն Petrochina-ի շահույթը նվազել է մոտ 98%-ով՝ մինչև 531 մլն յուան, Sinopec-ի գուտ շահույթը նվազել է 21.6%-ով՝ մինչև 19.9 մլրդ յուան, իսկ CNOOC-ը նշված ժամանակահատվածում կրել է մոտ 7.74 մլրդ յուանի գուտ վնաս:

Ընդ որում առաջին կսամյակի ընթացքում Petrochina-ի և Sinopec-ի նավթի արտադրության ծավալները կրճատվել են համապատասխանաբար 1.4%-ով և 11.43%-ով: Petrochina-ում ապագա արդյունահանման համար կատարված


ներդրումները նվազել են 46%-ով, իսկ արդյունահանման մեկ միավորի համար կատարվող ծախսումները՝ ավելի քան 10%-ով: Չինաստանում նավթի ընդհանուր ներքին արդյունահանման ծավալները հունվար-հուլիս ժամանակահատվածում կրճատվել են 5.1%-ով՝ մինչև 3.9մլն բարել/օր:

Moody's միջազգային վարկանիշային գործակալությունն ավելացրել է Չինաստանի ՀՆԱ աճի կանխատեսվող մակարդակը՝ այժմ արդեն 2016թ. համար կանխատեսվում է 6.6% տնտեսական աճ (նախկին 6.3%-ի փոխարեն), իսկ 2017թ. համար՝ 6.3% (նախկին 6.1%-ի փոխարեն): Կանխատեսման փոփոխությունը բացատրվում է երկրի տնտեսության որոշակի կայունացմամբ և հումքային ապրանքների գների աճով, հարկաբյուջետային և դրամավարկային



քաղաքականության մեջ վերջին ժամանակներս արված էական քայլերով:

Վերջին տվյալներով երկրում գրանցվել է 0.2% գնաճ: Հուլիսին ամսական կտրվածքով (MoM) սպառողական գներն աճել են 0.2%-ով այն դեպքում, երբ նախորդ ամիս գրանցվել էր 0.1% գնանկում: Նշենք, որ Չինաստանում ամսական կտրվածքով անընդմեջ սպառողական գների անկումներ էին գրանցվում մարտ ամսից սկսած: Տարեկան (YoY) կտրվածքով սպառողական գների աճը 0.1 կետով զիջում է նախորդ ամսվա տարեկան աճին: Շարունակում են նվազել արդյունաբերողների գների անկման տեմպերը: Հունիս ամսին գրանցված 2.6% գնանկման փոխարեն արդեն հուլիսին արձանագրվել է 1.7%




գնանկում, ինչը 2014թ. սեպտեմբերից հետո գրանցված նվազագույն արժեքն է: Նշենք, որ արդյունաբերողների գների անկման տեմպերը նվազում են արդեն 7-րդ ամիսը շարունակ:

Չինաստանի Կոմերցիայի նախարարության հրապարակած տվյալների համաձայն օտարերկրյա ուղղակի ներդրումները երկրում 2016թ. առաջին յոթ ամիսների ընթացքում տարեկան կտրվածքով (YoY) աճել են 4.3%-ով՝ հասնելով մինչև 491.5 մլրդ յուանի կամ 77.1 մլրդ ԱՄՆ դոլարի: Միևնույն ժամանակ հուլիս ամսվա ընթացքում կապիտալ ներդրումները Չինաստանում 2015թ. հուլիսի համեմատ նվազել են 1.6%-ով՝ հասնելով 49.8 մլրդ յուանի (7.7 մլրդ ԱՄՆ դոլար):

Ընթացիկ տարվա առաջին յոթ ամիսների ընթացքում ներդրումների մեծ մասը՝ 70.1%-ը (344.3 մլրդ յուան կամ 54 մլրդ ԱՄՆ դոլար), բաժին է ընկել ծառայությունների ոլորտին: Ներդրումների մեծ մասն իրականացվել է ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից և Գերմանիայից, որոնք աճել են համապատասխանաբար 129.8%-ով, 96.8%-ով և 96.6%-ով: Նշենք, որ նախորդ տարվա ընթացքում Չինաստանն արտաքին ներդրումների ներգրավման ծավալներով 24-րդ անգամ զբաղեցրել էր աշխարհում առաջին տեղը:

Օգոստոսին տարեկան կտրվածքով 2.8%-ով կրճատվել են Չինաստանից արտահանման ծավալները, իսկ ներմուծումն աճել է 1.5%-ով, ինչը 2014թ. նոյեմբերից հետո գրանցված աճի առաջին ցուցանիշն է: Արդյունքում առևտրային հաշվեկշռի դրական սալդոն դոլարային արտահայտությամբ 52.31մլրդ-ից նվազել է մինչև 52.05 մլրդ ԱՄՆ դոլար:





Ճապոնիա

Ճապոնիայի Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված տվյալների համաձայն երկրի ներմուծման ծավալներն անկում են ապրում 19-րդ ամիսը շարունակ: Հուլիս ամսին տարեկան կտրվածքով անկումը կազմել է մոտ 25%, ինչն 2009թ հոկտեմբերից հետո գրանցված առավելագույն անկումն է: 14%-ով (YoY) կրճատվել են նաև արտահանման ծավալները, ինչը մեծ չափով պայմանավորված է առևտրային խոշորագույն գործընկերներից մեկի՝ Չինաստանի տնտեսությունում առկա խնդիրներով: Արտահանման ծավալների կրճատումներ գրանցվում են արդեն 2015թ. հոկտեմբեր ամսից: 2016թ. փետրվարին հունվար ամսվա համեմատ զգալիորեն նվազելուց հետո արտահանման ծավալների կրճատման տեմպերը հաջորդ ամիսներին մինչև հուլիս ամիսը անընդհատ ավելացել էին, իսկ հուլիսին որոշ չափով նվազելով՝ կազմել էին 7.4%:

Ընդ որում, մի շարք կանխատեսումների համաձայն՝ մոտ ապագայում Ճապոնիայի արտաքին առևտրի ցուցանիշների բարելավում չի սպասվում: Չնայած Ճապոնիայի Բանկի կիրառած ջանքերին՝ իենը շարունակում էր արժևորվել. վերջին ամսվա ընթացքում USD/JPY զույգը նույնիսկ նվազել է 100 սահմանային արժեքից: Իենի դիրքերի նման ամրապնդումը խաթարում է արտահանողների գործունեությունը:

Ջեքսոն Հոլում Ճապոնիայի Բանկի նախագահ Հ. Կուրոդան ելույթի ընթացքում նշել էր, որ ինֆլյացիայի տեմպերը նպատակային մակարդակին հասցնելու համար Բանկն առանց տատանվելու պատրաստ է ինչպես քանակական մեղմացման



ծրագրով ակտիվների գնումների ծավալների ավելացման, այնպես էլ բացասական տոկոսադրույքների հետագա նվազեցման: Արժևորված իենը բացասաբար է անդրադառնում ճապոնական արտահանող ընկերությունների շահույթների վրա, ինչպես նաև խաթարում է երկրի իշխանությունների կիրառած ջանքերն ուղղված ինֆլյացիայի ու տնտեսական աճի խթանմանը: Հայտարարությունը շուկայի մասնակիցների կողմից ընդունվեց որպես արժույթային շուկայում ուղղակի ինտերվենցիաներ իրականացնելու՝ Ճապոնիայի Բանկի պատրաստակամության ազդակ:

Ճապոնիայի կառավարության կողմից հրապարակված տվյալների համաձայն 2016թ երկրորդ քառորդում արտահանման կրճատման և կորպորատիվ ներդրումների ցածր մակարդակի ֆոնին երկրի տնտեսական աճի տեմպերը զրոյական ցուցանիշ են գրանցել:


Նախնական գնահատականների համաձայն, 2016թ առաջին քառորդի նկատմամբ ՀՆԱ աճը կազմել է 0.0% (QoQ), մինչդեռ առաջին քառորդում գրանցվել էր 0.5% տնտեսական աճ: Տարեկան կտրվածքով ՀՆԱ-ն 0.2% աճ է գրանցել (YoY)՝ հաջորդելով առաջին քառորդում գրանցված 2%-ին:

Գործազրկության մակարդակը երկրում հուլիս ամսին կազմել է 3% այն դեպքում, երբ նախորդ ամիս կազմել էր 3.1% և որևէ փոփոխություն չէր կանխատեսվում: Աշխատատեղ/աշխատանքի դիմումներ գործակցի համար հուլիսին կանխատեսվում էր 1.38 արժեք, սակայն փաստացի տվյալներով, ինչպես նախորդ ամիս, գործակիցը կազմել է 1.37:

Մանրածախ առևտրի ծավալները Ճապոնիայում հուլիս ամսին 2015թ. հուլիսի համեմատ (YoY) նախկին 1.4%-ի և կանխատեսվող 0.9%-ի փոխարեն կրճատվել են 0.2%-ով: Նշենք, որ վերջին երկու ամիսներին մանրածախ առևտուրը Ճապոնիայում զգալի չափերով նվազում էր և հուլիսին գրանցված ընդամենը 0.2% անկումը կարելի է դիտարկել որպես դրական տեղաշարժ: Տնային տնտեսությունների ծախսումները ամսական կտրվածքով աճել են 2.5%-ով այն դեպքում, երբ նախորդ երկու ամիսներին կրճատվել էին 1.5%-ով և 1.1%-ով: Գրանցված ամսական 2.5% (MoM) աճը 2015թ. հոկտեմբերից հետո գրանցված առավելագույն աճի ցուցանիշն է: Չնայած ամսական կտրվածքով գրանցված նման աճին՝ տարեկան (YoY) կտրվածքով տնային տնտեսությունների ծախսումները կրճատվել են 0.5%-ով (միջին եկամուտները Ճապոնիայում տարեկան կտրվածքով աճել են 1.4%-ով):

Օգոստոս ամսվա ընթացքում Ճապոնիայի արդյունաբերության ոլորտում պահպանվել է պասիվ միջավայրը:

Թեև արդյունաբերության ոլորտի PMI ինդեքսը նախորդ ամսվա համեմատ աճել է 0.2 կետով՝ կազմելով 49.5 գործակից, այնուամենայնիվ այն դեռևս պահպանվել է սահմանային 50 արժեքից ցածր:



Ապրանքային շուկա

Ոսկի: Օգոստոս ամսին ոսկու համաշխարհային շուկայում գների շարժի ընդհանուր միտումը նվազման ուղղությամբ էր, ինչն առավել կտրուկ ընթացք ստացավ հատկապես ամսվա վերջին տասնօրյակում: Վերջինս ամբողջությամբ փոխհատուցեց իր հուլիսյան նիստում ԱՄՆ ԴՊՀ կողմից ԴՎՔ բազային տոկոսադրույքն անփոփոխ թողնելու որոշման ֆոնին հուլիսի երկրորդ կեսին գրանցված աճը:

Ամսվա առաջին կեսին ոսկու գնի դինամիկան աչքի ընկավ որոշակի տատանողականությամբ՝ առավելապես պայմանավորված ԱՄՆ տնտեսական ցուցանիշների հրապարակման ֆոնին դոլարի փոխարժեքի շարժով: Ոսկու գնի առավել կտրուկ անկում (2.3%), գրանցվեց օգոստոսի 5-ին՝ ԱՄՆ աշխատանքի շուկայի վերաբերյալ դրական ցուցանիշների

հրապարակման ֆոնին դոլարի դիրքերի ամրապնդման արդյունքում (հուլիս ամսին ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թվաքանակը երկրում ավելացել է 255 հզ-ով՝ գերազանցելով սպասված 180 հզ-ով աճի ցուցանիշը): Օգոստոսի 9-10-ին գրանցվեց հակադարձ դինամիկա՝ 1.8% աճ՝ պայմանավորված 2016թ երկրորդ քառորդում ԱՄՆ ոչ գյուղատնտեսական ոլորտում աշխատանքի

Գրաֆիկ. Ոսկու գնի դինամիկա. օգոստոս 2016



արտադրողականության մակարդակի 0.5% նվազման վերաբերյալ ցուցանիշի հրապարակման ֆոնին ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմամբ:

Օգոստոստոսի 12-18-ն ընկած ժամանակահատվածն աչքի ընկավ ոսկու գների որոշակի աճով՝ որը կրկին իր հիմքում ուներ ԱՄՆ բացասական տնտեսական ցուցանիշների (մանրածախ առևտուր, ՄԳԻ, անշարժ գույքի շուկա) ֆոնին դոլարի դիրքերի նվազող դինամիկան:


Օգոստոսի վերջին տասնօրյակում, սակայն, ոսկու գնի դինամիկան համեմատաբար առավել կայուն նվազող էր: Վերջինս պայմանավորված էր ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման օգտին ԴՊՀ մի շարք ներկայացուցիչների ելույթների և ամենամյա ֆինանսական սիմպոզիումի շրջանակներում ԴՊՀ նախագահ Ջ.Յելլենի ելույթի արդյունքում ԱՄՆ դոլարի արժևորմամբ: Ոսկու գները նվազեցին 3.3%-ով՝ ամսվա վերջին օրերին գրանցելով վերջին երկու ամիսների մինիմումը՝ 1,309 ԱՄՆ դոլար ունցիայի դիմաց արժեքը: ԱՄՆ դոլարի արժևորմանն ու, հետևաբար, ոսկու գների նվազմանը նպաստեցին նաև ԱՄՆ-ում սպառողական վստահության և բնակչության եկամուտների վերաբերյալ հրապարակված օպտիմիստական տվյալները:

Ընդհանուր առմամբ ողջ օգոստոս ամսվա ընթացքում ոսկու գինը նվազեց 2.47%-ով: ԱՄՆ ԴՊՀ կողմից սեպտեմբերյան նիստում ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը շուկայի կողմից գնահատվում է ավելի քան 70%: Իսկ մինչ սեպտեմբերի 21-ին կայանալիք նիստը ԱՄՆ տնտեսության վերաբերյալ հրապարակվելիք ցուցանիշները, հատկապես՝ անշարժ գույքի շուկայի տվյալները, կարող են հավելյալ խթանող ազդեցություն ունենալ տոկոսադրույքների բարձրացման ուղղությամբ ԴՊՀ որոշման վրա՝ զսպելով ոսկու գների աճը:

Անկախ վերջին ամսվա մեջ ոսկու գնի անկումից, վերջինս պահպանվում է վերջին երեք տարիների մաքսիմումում:

Ոսկու համաշխարհային խորհրդի վերջին հաշվետվության տվյալների համաձայն 2016թ առաջին կիսամյակում ներդրումային ոսկու (ձուլակտորներ, մետաղադրամներ, ոսկու ETF ֆոնդերի բաժնետոմսեր) նկատմամբ պահանջարկն աճել է մինչև 1063.9 տոննա (41.6 մլրդ ԱՄՆ

Գրաֆիկ. Ոսկու ETF ֆոնդերում ներդրումների ծավալ. կիսամյակային. 2013-2016թթ



դոլար), ինչը 16%-ով գերազանցում է նախկինում ռեկորդային համարվող 2009թ առաջին կիսամյակի ցուցանիշը: Հատկապես ակներև է ոսկու ETF ֆոնդերում ներդրումների ծավալի աճը՝ 579.2 տոննա՝ համեմատած նախորդող 10 քառորդների

ընթացքում գրանցված 616.1 տոննա արտահոսքի հետ: Պահանջարկի աճի պատճառն աշխարհում տիրող տնտեսական և քաղաքական անկայունությունն է՝ ԴՎՔ բացասական տոկոսադրույթների կիրառման պրակտիկայի տարածումը, Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ կազմից դուրս գալու որոշումը, ԱՄՆ-ում ԴՎՔ բազային տոկոսադրույթի բարձրացման ժամանակացույցի շուրջ պահպանվող անորոշությունը, ԱՄՆ-ում մոտավոր նախագահական ընտրությունները:

2016թ երկրորդ քառորդում ոսկու նկատմամբ համաշխարհային պահանջարկն իր բոլոր դրսևորումներով կազմել է 1050.2 տոննա, ինչը 15%-ով ավել է 2015թ երկրորդ քառորդի ցուցանիշից, սակայն 18%-ով պակաս 2016թ առաջին քառորդի ցուցանիշից: Ներդրումային ոսկու պահանջարկը կազմել է 448.4 տոննա՝ 141%-ով գերազանցելով 2015թ համապատասխան ժամանակահատվածի և 27%-ով զիջելով 2016թ առաջին քառորդի ցուցանիշը: Արդյունքում, տարվա ընթացքում ոսկու մոտ 25% գնաճ է արձանագրվել:

Նավթ: Օգոստոս ամսվա գրեթե ողջ ընթացքում նավթի համաշխարհային շուկայում գնաճ է գրանցվել: Վերջինիս պատճառն ամսվա սկզբին Սաուդյան Արաբիայի հայտարարությունն էր այն մասին, որ սեպտեմբերի 21-ին ՕՊԵԿ և ՌԴ միջև Ալժիրում կայանալիք հանդիպման ժամանակ համաձայն է դիտարկել նավթի արդյունահանման ծավալների ֆիքսման հարցը: Հայտարարությունը շուկայում առաջ բերեց կարճ դիրքերի մասսայական փակում՝ հանգեցնելով նավթի գների ավելի քան 21% աճի:

Նավթի արդյունահանման ծավալների ֆիքսման նոր փորձը նախատեսվում է կատարել այն պայմաններում, երբ Սաուդյան Արաբիայի կողմից արդյունահանման ծավալները հասցվել են նոր ռեկորդային՝ օրական 10.67մլն բարել մակարդակին: Վերջինս 400հզ բարելով գերազանցում է արդյունահանման ծավալների ֆիքսման նախորդ փորձի ժամանակ առկա ծավալները (Դոհա, ապրիլ 2016թ): Արդեն ամսվա վերջին Սաուդյան Արաբիայի նավթի նախարարի խոսքերով իրենք դեռևս չեն դիտարկել արդյունահանման ծավալների ֆիքսման հարցը, քանի որ նավթի նկատմամբ առկա է արտաքին պահանջարկ: Սակայն նշենք, որ նավթի վաճառքից եկամուտները շարունակում են ընկնել, իսկ 2014թ-ից ՕՊԵԿ-ի ընդհանուր շահույթը նվազել է 55%-ով:

Գրաֆիկ. Brent նավթի գնի դինամիկա. օգոստոս 2016



Իրանն ու Իրաքը, որոնք ՕՊԵԿ-ի անդամ երկրների շարքում արդյունահանման ծավալների մեծությամբ զբաղեցնում են երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար, համաձայնել են արդյունահանման ծավալների ֆիքսմանը, սակայն կարևոր վերապահումներով: Իրանի դեպքում ֆիքսումը չպետք է խանգարի համաշխարհային շուկայում իր բաժնի ավելացմանը: Իրանը հայտարարում է, որ ֆիքսման հարցը կդիտարկվի միայն այն ժամանակ, երբ ապահովվի նավթի արդյունահանման ու շուկայի մասնաբաժնի իր նպատակային մակարդակները: Մինչև Իրանի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը վերջինիս նավթի արդյունահանման ծավալները կազմում էին 4մլն բարել: Սակայն այս ցուցանիշը, հավանաբար, չի բավարարի Իրանին այն դեպքում, երբ մրցակից Սաուդյան Արաբիան ապահովում է մաքսիմումը: Միևնույն ժամանակ, օրական 4 մլն բարելից ավել արդյունահանման նպատակով Իրանին անհրաժեշտ կլինի նոր ներդրումներ կատարել ենթակառուցվածքները վերականգնելու և հին հանքավայրերն ընդլայնելու համար: Վերջինիս համար Իրանին անհրաժեշտ են նոր միջազգային պայմանագրեր, ինչի ուղղությամբ երկրի իշխանություններն արդեն իսկ աշխատում են:

Ֆիքսման վերաբերյալ հնարավոր համաձայնության նախաշեմին Իրաքը նույնպես աշխատում է նավթի արդյունահանման ծավալների ավելացման ուղղությամբ: Վերջինիս արդյունահանման օրական ծավալները հասել են 4.78 մլն բարելի: Երկրի նավթի նորանշանակ նախարար Ջ.Ալ-Լուաիբիի առաջին իսկ քայլը երկրի հարավում գտնվող նավթային ընկերություններին դիմելն էր արդյունահանման ծավալների մեծացման և ծախսերի նախագծերի ներկայացման խնդրանքով: Սակայն միջազգային ընկերությունները պատրաստ են Իրաքի նավթային ոլորտում ներդրումներ կատարել միայն երկրի կառավարության կողմից անհրաժեշտության դեպքում փոխհատուցում ստանալու մեջ վստահ լինելու պարագայում: Նախորդ տարի Իրաքը չկարողացավ ապահովել անհրաժեշտ արտահանումը՝ հանգեցնելով ընկերությունների կողմից ներդրումների կրճատմանը:

Ապրիլին Դոհայում նավթի արդյունահանման ծավալների ֆիքսման ՕՊԵԿ-ի անհաջող փորձից հետո Իրանն ու Սաուդյան Արաբիան միասին 1 մլն բարելով ավելացրել են արդյունահանման իրենց ծավալները: Ներկայումս ՕՊԵԿ-ի մասշտաբով օրական արդյունահանվում է 34 մլն բարել նավթ: Գնահատումների համաձայն 1մլն բարել լրացուցիչ նավթը մեկ տարի ավել կպահանջի շուկայում հավասարակշռության ապահովման համար: Ուստի ներկայիս մակարդակում ծավալների ֆիքսումն էական պրակտիկ նշանակություն կարող է չունենալ:


Մյուս կողմից, եթե դիտարկենք ԱՄՆ Էներգետիկ տեղեկատվության ադմինիստրացիայի՝ 2017թ նավթի պահանջարկի կրճատման վերաբերյալ արած կանխատեսումը, Էներգիայի այլընտրանքային աղբյուրների ակտիվացումն ու

գեոքաղաքական բոլոր գործոնները (Մերձավոր արևելքի երկրների տարբեր դիրքորոշումները Սիրիայում պատերազմի վերաբերյալ, Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև առկա մարցակցությունը), ապա առավել հավանական է դառնում այն, որ երկրներն ընդհանուր համաձայնության չեն գա: Սակայն, դա չի խոչընդոտում մասնակից երկրների ներկայացուցիչների հայտարարությունների, հնչեցվող տարբեր կարծիքների ազդեցությանը շուկայում գնի ձևավորման գործընթացին, ինչը և տեղի էր ունենում վերջին մի քանի շաբաթների ընթացքում:

Մինչև ամսվա վերջին տասնօրյակը նավթի գների գրանցված անընդմեջ աճին օգոստոսի 19-ից հաջորդեց գնանկում, ինչին նպաստեցին միաժամանակ մի շարք գործոններ: Նախ Նիգերիան իր կասկածամտությունը հայտնեց նավթի արդյունահանման ծավալների կրճատումը կազմակերպելու ՕՊԵԿԻ հնարավորության վերաբերյալ: Օգոստոսի 19-ին Baker Hughes-ի կողմից հրապարակվեց ԱՄՆ-ում ակտիվ նավթահորերի թվաքանակի ցուցանիշը, որի համաձայն վերջինս աճել է՝ 396-ից հասնելով 406-ի: Այսինքն՝ նավթի շուկայում շարունակվում էր առաջարկի աճի գործընթացը: Առավել մեծ ազդեցություն նավթի գների վրա, թերևս, գործում է ԱՄՆ դոլարի փոխարժեքը: ԱՄՆ ԴՎՔ բազային տոկոսադրույթի շուտափույթ բարձրացման օգտին ԱՄՆ ԴՊՀ ներկայացուցիչների ելույթների, իսկ այնուհետև ԱՄՆ-ում ֆինանսական ամենամյա սիմպոզիումի ժամանակ ԴՊՀ նախագահ Ջ.Յելենի ելույթի ֆոնին ԱՄՆ դոլարի դիրքերի 1.5% աճն այլ հիմնական արժույթների նկատմամբ հանգեցրեց դոլարով գնանշվող հումքային ապրանքների, այդ թվում՝ նավթի գների անկմանը: Այս պայմաններում նավթային թրեյդերները նախորդ օրերի գնաճից հետո սկսեցին ֆիքսել իրենց շահույթները՝ ավելի նպաստելով նավթի գների անկմանը: Օգոստոսի վերջին տասնօրյակում, որոշակի տատանողականությամբ, Brent տեսակի նավթի գինը մոտ 4%-ոց անկում գրանցեց:

Այլ ֆոնդային ապրանքներ: Ֆոնդային շուկայում աճի ակնառու դինամիկա գրանցած ապրանքներից է **շաքարավազը:**

Վերջինիս գնաճը շարունակվում է, իսկ 2015/16թ սեզոնին վերջին հինգ տարիների ընթացքում առաջին անգամ շաքարավազի շուկայում դեֆիցիտ է գրանցվել: Եղանակային վատ պայմանների հետևանքով կտրուկ նվազել է գլխավոր արտադրող երկրների՝ Բրազիլիայի, Հնդկաստանի, Թայլանդի և Չինաստանի




արտադրանքը: 2015/16թ սեզոնին արտադրանքի ընդհանուր ծավալը նվազեց 6.9%-ով՝ կազմելով 164.9մլն մետրական տոննա: Չինաստանում շաքարավազի արտադրության ծավալների կրճատմանը նպաստեցին ոչ միայն եղանակային անբարենպաստ պայմաններն, այլև բարձր արտադրական ծախսերն ու պետության կողմից շաքարավազի նկատմամբ սահմանված գնային հատակի վերացումը, ինչի արդյունքում արտադրողներն անցում կատարեցին առավել եկամտաբեր գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցմանը:

2016/17թ համար կանխատեսվում է շաքարավազի արտադրության ծավալների որոշակի աճ՝ մինչև 169.3մլն մետրական տոննա՝ Բրազիլիայում համեմատաբար առավել բարենպաստ եղանակային պայմանների արդյունքում: Միևնույն ժամանակ սպասվում է, որ կկրճատվեն Թայլանդի և Հնդկաստանի արտադրության ծավալները: Արդյունքում, շուկայում դեֆիցիտը կպահպանվի:

2016թ հուլիս ամսին շաքարավազի մեկ ֆուտի միջինացված արժեքը համաշխարհային շուկայում հասել է 19.69 ցենտի:

Ցորենի համաշխարհային շուկայում գները գրանցում են վերջին տաս տարիների ընթացքում դիտված նվազագույն մակարդակները: Ցորենի խոշորագույն արտահանող երկրներում՝ ՌԴ-ում և ԱՄՆ-ում ռեկորդային բարձր բերք է գրանցվել՝ հանգեցնելով ցորենի և դրանից պատրաստվող մթերքների համաշխարհային գների նվազմանը: Նախորդ շաբաթվա ընթացքում Ցորենի միջազգային խորհուրդը հրապարակեց համաշխարհային մասշտաբով ցորենի արտադրության ծավալների վերաբերյալ իր կանխատեսումները, որոնց համաձայն վերջինս ընթացիկ տարում կհասնի ռեկորդային 743 մլն տոննայի՝ 1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Գրաֆիկ. Ցորենի համաշխարհային շուկայում գների դինամիկա. 2016թ հլ-օգ (ցենտ)



Չիկագոյի ապրանքային բորսայում ցորենի ֆյուչերսների գինը վերջին օրերին նվազել է 4.5%-ով՝ հասնելով մեկ բուշելի (27կգ) դիմաց 3.73 ԱՄՆ դոլարի, որն 2006թ սեպտեմբերից հետո գրանցված նվազագույն գինն է: 2008թ գրանցված գնային պիկի նկատմամբ, երբ բուշելի արժեքը գերազանցում էր 13 ԱՄՆ դոլարը, ցորենի գները նվազել են մոտ 71%-ով: Սակայն նշենք, որ գնանկումն էապես չի անդրադարձել ցորենի նկատմամբ պահանջարկի վրա, որը մեծապես կախված է բնակչության թվաքանակի աճից: Կանխատեսումների համաձայն, ընթացիկ տարում ցորենի արտադրության ծավալները մոտ 10մլն տոննայով կգերազանցեն պահանջարկը, ինչն առավել կնվազեցնի համաշխարհային շուկայում առկա գները: Ցորենի միջազգային

խորհրդի գնահատմամբ, սակայն, ըստ որակային հատկանիշների ցորենի բաշխումն անհամաչափ է, և որակյալ ցորենի գները համեմատաբար քիչ են նվազել:

Բազային մետաղների շուկայում, ի տարբերություն մնացած մետաղների՝ **պղնձի** գների նկատմամբ վերջին երկու ամիսներին ձևավորված տրամադրություններն արջային են: Վերջինիս պատճառը պղնձի խոշորագույն ներմուծող երկրի՝ Չինաստանի կողմից պահանջարկի կրճատումն է: Տարվա առաջին քառորդում Չինաստանի կողմից այլումինի ներմուծման ծավալները ռեկորդային բարձր մակարդակներում էին, սակայն վերջին ամիսներին հակառակ դնամիկան է գրանցվում: Հուլիս ամսին Չինաստանի կողմից պղնձի ներմուծման ծավալները կազմել են 360հզ տոննա՝ նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ աճելով միայն 3.4%-ով և նախորդ ամսվա նկատմամբ կրճատվելով արդեն չորրորդ ամիսը շարունակ: 2015թ օգոստոսից հետո սա Չինաստանի կողմից պղնձի ներմուծման նվազագույն ցուցանիշն է:



Ի տարբերություն ցինկի և նիկելի, 2016թ առաջին քառորդում պղնձի աճող ներմուծումը հիմնված չէր սպառողական պահանջարկի վրա և դրա մեծ մասն ուղղվեց Շանհայի բորսա՝ հանգեցնելով պղնձի պաշարների կուտակմանը: Վերջինս, իր հերթին հանգեցրեց Չինաստանի կողմից պահանջարկի կրճատմանն ու գների անկմանը:

Արժույթային շուկա

EUR/USD: Օգոստոս ամսվա առաջին կեսին եվրոպական արժույթն ԱՄՆ դոլարի նկատմամբ առավելապես դրսևորեց աճման դինամիկա: EUR/USD փոխարժեքն ամսվա առավելագույն արժեքներին հասավ, երբ հրապարակվեց ԱՄՆ ԴՊՀ հուլիսի 26-27-ին կայացած նիստի արձանագրությունը: Թեև ԴՎՔ կոմիտեի որոշ քվեարկող անդամներ տեսնում են տոկոսադրույքի՝ մոտ ապագայում բարձրացման անհրաժեշտությունը, ըստ

Գրաֆիկ. EUR/USD փոխարժեք/ օգոստոսի 1-18



ընդհանուր համաձայնության, նախքան նման որոշում կայացնելը նոր տնտեսական ցուցանիշներ են անհրաժեշտ: ԴՊՀ Բաց շուկայական գործառնությունների կոմիտեի անդամների մի մասը հանդես է եկել տոկոսադրույքների մոտալուտ բարձրացման օգտին՝ հղում կատարելով աշխատանքի շուկայի բարձր ցուցանիշներին, իսկ մյուս անդամներն, ընդհակառակը, նախընտրում են սպասել՝ մատնանշելով ինֆլյացիայի զուսպ մակարդակներին: Ընդհանուր առմամբ, ԴՊՀ անդամները տեսնում են ԱՄՆ աշխատանքի շուկայի և ողջ տնտեսության զարգացման դրական հեռանկար, սակայն որոշ անդամներ նշում են, որ զբաղվածության աճի տեմպերի հետագա դանդաղումը խոչընդոտ կլինի տոկոսադրույքների բարձրացման համար: Մյուս կողմից, քաղաքականության մշակողներից ոմանք մտահոգություն են հայտնել այն բանի վերաբերյալ, որ ցածր տոկոսադրույքները կարող են վնասել երկրի ֆինանսական կայունությանը: Արդյունքում, ԴՊՀ անդամների միջև առկա է անհամաձայնություն բազային տոկոսադրույքի հետագա բարձրացման ժամանակացույցի վերաբերյալ: Այսինքն՝ առավել հավանական է, որ ԴՊՀ-ն, նախքան տոկոսադրույքների վերաբերյալ որոշում կայացնելը, կհետևի նոր հրապարակվող տնտեսական ցուցանիշներին:

Տոկոսադրույքների մոտալուտ բարձրացման ակնարկ չպարունակող արձանագրության հրապարակումը հանգեցրեց ԱՄՆ դոլարի դիրքերի հետագա նվազման. EUR/USD փոխարժեքը, ամսվա սկզբից աճելով մոտ 1.8%-ով, օգոստոսի 18-ին հասավ ամսվա առավելագույն 1.1353 արժեքին:

Արձանագրության հրապարակումից հետո ելույթ ունեցան ՖՊՀ մի քանի անդամներ, որոնք առավելապես նշում էին ԴՎՔ խստացման անհրաժեշտությունը: Սա հանգեցրեց ներդրողների շրջանում 2016թ. ընթացքում ԴՎՔ տոկոսադրույքի

բարձրացման սպասումների աճի և, հետևաբար, ԱՄՆ դոլարի դիրքերի որոշ չափով ամրապնդմանը: Օգոստոսի 22-ից, սակայն, արդեն պայմանավորված ներդրողների կողմից ԱՄՆ ԴՊՀ նախագահ Ջ. Յելլենի ելույթից առաջ որոշակի զգուշավորության դրսևորմամբ՝ ԱՄՆ դոլարը սկսել էր որոշ չափով թուլացնել դիրքերն այլ հիմնական արժույթների նկատմամբ: EUR/USD փոխարժեքը օգոստոսի 22-23 ժամանակահատվածում գրանցեց մոտ 0.68% աճ, սակայն արդեն օգոստոսի 23-ի երեկոյան փոխարժեքը կրկին փոխեց աճի դինամիկան: Դոլարի նման ուժեղացմանը նպաստեցին նաև օրվա վերջում հրապարակված ԱՄՆ անշարժ գույքի շուկայի հուլիս ամսվա տվյալները: Նոր տվյալներով հուլիսին հունիս ամսվա համեմատ նոր տների վաճառքներն աճել են 12.4%-ով այն դեպքում, երբ կանխատեսվում էր 2%-ով անկում իսկ նախորդ ամիս գրանցվել էր 1.7% անկում: Հուլիս ամսվա ընթացքում նոր տների վաճառքի թիվը կազմել է 654 հազար նախկին 582 հազարի և կանխատեսվող 580 հազարի փոխարեն: Նշենք, որ սա 2007թ.-ից հետո գրանցված առավելագույն ամսական ցուցանիշն է: EUR/USD փոխարժեքի անկմանը նպաստեց նաև օգոստոս ամսվա համար ԵՄ սպառողների վստահության ինդեքսի նախնական տվյալի հրապարակումը: Ինդեքսը նախորդ ամսվա -8 գործակցից արդեն օգոստոսին նվազել է մինչև -8.5 այն դեպքում, երբ կանխատեսվում էր -7.6 արժեք:

Օգոստոսի 26-ին ԱՄՆ-ում ֆինանսական ամենամյա սիմպոզիումի շրջանակներում տեղի ունեցավ ԴՊՀ նախագահ Ջ.Յելլենի ելույթը, որի ժամանակ վերջինս նշեց, որ վերջին ամիսներին ավելացել են դրամավարկային քաղաքականության խստացման օգտին խոսող գործոնները: Ջ.Յելլենը հայտարարեց, որ ԴՊՀ-ն հիմնվում է այն կանխատեսումների վրա, որ ԱՄՆ ՀՆԱ-ն կայուն տեմպետով աճելու է, աշխատանքի շուկայում դրական զարգացումները շարունակվելու են, իսկ մոտակա տարիներին գնաճը երկրում կհասնի ԴՊՀ նպատակային մակարդակին: Ուստի ԴՊՀ Դաշնային բաց շուկայական գործառնությունների կոմիտեն նպատակահարմար է համարում տոկոսադրույքների աստիճանական բարձրացումը: Ըստ Ջ.Յելլենի, ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացումը կախված կլինի նրանից, թե որքանով ճշգրիտ կլինեն ԴՊՀ կանխատեսումները: Իր ելույթի ընթացքում Ջ.Յելլենը նաև նշեց, որ ԴՊՀ-ն ներկայումս դիտարկում է նաև այլ լրացուցիչ միջոցներ հետազայում տնտեսական ճգնաժամերի դեմ պայքարելու համար, այդ թվում՝ ռեցեսիայի պայմաններում ԴՊՀ կողմից գնվող ակտիվների ցանկի ընդլայնումն ու տարբեր նահանգներին տրամադրվելիք ուղղակի աջակցությունը:

ԴՊՀ նախագահի կողմից վերոնշյալ մանրամասների հնչեցումից հետո ԱՄՆ դոլարի դիրքերն այլ հիմնական արժույթների նկատմամբ սկսեցին բարելավվել: Դոլարի դիրքերի հետագա, առավել կտրուկ բարելավմանը նպասեց ԴՊՀ փոխնախագահ Ս.Ֆիշերի տված հարցազրույցը, որի ժամանակ վերջինս նշեց, որ մինչև տարվա վերջ երկու անգամ տոկոսադրույթների բարձրացումը

Գրաֆիկ. EUR/USD փոխարժեք/օգոստոսի 16-31



հնարավոր է՝ կախված տնտեսական ցուցանիշներից: Արդյունքում, սեպտեմբերի 21-ի նիստում տոկոսադրույթների բարձրացման հավանականությունը հասավ 64%-ի: Օգոստոսի 18-31 ժամանակահատվածում EUR/USD փոխարժեքն ավելի քան 1.9% անկում գրանցեց, ինչի արդյունքում ամբողջ օգոստոս ամսվա ընթացքում փոխարժեքի անկումը կազմեց մոտ 0.2%:

GBP/USD: Օգոստոս ամսվա առաջին կեսին բրիտանական արժույթն ԱՄՆ դոլարի նկատմամբ դրսևորեց անկման դինամիկա: Ֆունտի անկումը պայմանավորված էր Անգլիայի Բանկի՝ սպասվածից ավելի մեղմ դրամավարկային քաղաքականության սահմանմամբ: Օգոստոսի 4-ին՝ հերթական նիստի ժամանակ, Բանկը որոշեց 0.25 կետով նվազեցնել ԴՎՔ տոկոսադրույքը և միննույն ժամանակ ավելացրեց ակտիվների գնումների ծավալները՝ պետական պարտատոմսերի գնումների ծավալներն ավելացնելով 60մլրդ և կորպորատիվ պարտատոմսերի գնումները՝ 10 մլրդ ֆունտով: Չնայած, որ ֆունտը նման որոշման հրապարակման ֆոնին կտրուկ անկում գրանցեց՝ Բանկի նախագահ Մ. Քարնիի ոչ շատ <<աղավնային>> ելույթից հետո որոշ չափով կարողացավ զսպել անկումը: 2009թ.-ից հետո մինչ այժմ 0.5% կազմող տոկոսադրույքը, փաստորեն, արդեն գտնվում է ռեկորդային ցածր մակարդակում: GBP/USD փոխարժեքի անկումը շարունակվեց մինչև օգոստոսի 16-ը: Օգոստոսի 16-ին հրապարակվեցին Մեծ Բրիտանիայի մի շարք գնային ինդեքսներ՝ հաշվարկված հուլիս ամսվա համար: Քանի որ տվյալները վերաբերում են հետքերքսիթյան ժամանակահատվածին, ներդրողների մեծ մասը սպասում էր, որ դրանք կլինեն առավելապես բացասական, սակայն փաստացի տվյալներն այլ պատկեր ցույց տվեցին:

Մասնավորապես, սպառողական գները հուլիս ամսվա ընթացքում 2015թ. հուլիսի համեմատ սպասվող 0.5%-ի փոխարեն աճել են 0.6%-ով, իսկ ՄԳԻ ամսական MoM փոփոխությունը կազմել է -0.1% նախկին +0.2%-ի փոխարեն: Հուլիսին թե՛ ամսական (MoM) և թե՛ տարեկան (YoY) կտրվածով աճել են արդյունաբերողների վաճառքների գները (Core)՝ համապատասխանաբար կազմելով 0.4% և 1%: Մանրածախ առևտրի գների MoM փոփոխությունը հուլիսին կազմել է 0.1% նախկին 0.4%-ի և կանխատեսվող -0.1%-ի փոխարեն, իսկ տարեկան YoY փոփոխությունը՝ 1.9% նախկին 1.6%-ի և կանխատեսվող ընդամենը 1.7% աճի փոխարեն:

Աշխատանքի շուկայի և ինֆլյացիայի դրական տվյալներից հետո հրապարակված Մեծ Բրիտանիայի մանրածախ առևտրի սպասվածից լավ տվյալներն էլ ավելի նպաստեցին բրիտանական արժույթի դիրքերի ամրապնդմանը: Նման աճը պայմանավորված էր նաև ԱՄՆ դոլարի թուլացմամբ: Արդեն օգոստոսի 18-19-ին ԱՄՆ ՖՊՀ անդամների ելույթներից հետո դոլարի ուժեղացման պայմաններում GBP/USD փոխարժեքը որոշակի անկում գրանցեց:

Նշենք, որ չնայած վերջին ժամանակներս Brexit-ին հաջորդող ժամանակահատվածին վերաբերող տնտեսական ցուցանիշներն առավելապես սպասվածից ավելի դրական են, այնուամենայնիվ դեռևս անորոշություններն ու ռիսկերը պահպանվում են: America Merrill Lynch բանկի կանխատեսմամբ մեծ հավանականությամբ Անգլիայի Բանկը նոյեմբերին ներկայիս 0.25%-ից կնվազեցնի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը մինչև 0.1%: Ընդ որում տոկոսադրույքի նվազեցման հավանականությունն ավելի բարձր է գնահատվում, քան ակտիվների գնման ծավալների ավելացումը, քանի որ

Գրաֆիկ. GBP/USD փոխարժեքի դինամիկան
2016թ. օգոստոսի 1-15 ժամանակահատվածում



Գրաֆիկ. GBP/USD փոխարժեքի դինամիկան
2016թ. օգոստոսի 16-31 ժամանակահատվածում




քանակական մեղմացման (QE) ծրագրի արդյունավետության համար անհրաժեշտ պայման է տնտեսական վստահությունը, իսկ Մեծ Բրիտանիայում ներկայումս Brexit-ի հետևանքով վստահությունն էապես նվազել է: Եթե բանկի կանխատեսումն իրականանա, ապա կարելի է սպասել բրիտանական արժույթի թուլացում այլ հիմնական արժույթների նկատմամբ:

Ամսվա առաջին կեսին գրանցված մոտ 2.8% անկումից հետո, փաստորեն, GBP/USD փոխարժեքը կարողացավ ամսվա երկրորդ կեսին վերականգնվել՝ աճելով մոտ 0.6%-ով: Արդյունքում օգոստոսի 31-ին արդեն ամսվա սկզբից փոխարժեքի անկումը կազմեց մոտ 0.3%:

USD/JPY: Ճապոնական արժույթն ամողջ օգոստոս ամսվա ընթացքում շարունակեց հուլիս ամսվա վերջից սկսված արժևորման դինամիկան: USD/JPY փոխարժեքը ամսվա սկզբից մինչ օգոստոսի 26-ը ավելի քան 2.1% անկում գրանցելով հասել էր մինչև 100.25 արժեքը, իսկ ամսվա ընթացքում գրանցել էր նույնիսկ 99.84 նվազագույն արժեք: Փաստորեն, արդեն 2016թ. օգոստոս ամսվա ընթացքում փոխարժեքը հասավ վերջին երեք տարիների նվազագույն արժեքներին:

Թեև օգոստոսի 17-ին Ճապոնիայի Ֆինանսների նախարարության կողմից արված հայտարարությունն այն մասին, որ իենի հետագա արժևորման պարագայում արժութային շուկայում կիրականացվի ինտերվենցիա հանգեցրեց իենի փախարժեքի որոշակի նվազմանը, սակայն նույն օրն ԱՄՆ ԴՊՀ հուլիսյան նիստի արձանագրության հրապարակումը կրկին հանգեցրեց իենի արժևորմանը: Շուկայի մասնակիցները, հրապարակված արձանագրության մեջ չտեսնելով ԱՄՆ ԴՎՔ բազային տոկոսադրույքի մոտալուտ բարձրացման ակնարկ, սկսեցին ազատվել ԱՄՆ դոլարից՝ միջոցներն ուղղելով դեպի առավել ապահով ակտիվներ:

USD/JPY փոխարժեքը, սակայն, արդեն օգոստոսի 26-ից փոխեց անկման դինամիկան: Օգոստոսի 26-ին ԱՄՆ ՖՊՀ նախագահ Զ. Յելլենի ելույթից հետո ԱՄՆ դոլարի սփոթ ինդեքսն ավելի քան 1.2% աճ գրանցեց: Ինդեքսի մեջ ներառված 6 արժույթներից եվրոյի նկատմամբ դոլարի աճը մեկ օրվա ընթացքում կազմեց մոտ 1%, բրիտանական ֆունտի նկատմամբ՝ մոտ 1.13%,



շվեդական կրոնայի նկատմամբ՝ մոտ 1.14%, շվեյցարական ֆրանկի նկատմամբ՝ 1.38%, կանադական դոլարի նկատմամբ՝ մոտ 1.26% և ճապոնական իենի նկատմամբ՝ ավելի քան 2.15%:

USD/JPY փոխարժեքի նման աճը պայմանավորված էր նաև Ճապոնիայի Բանկի նախագահ Հ. Կուրոդայի ելույթով: Վերջինս Ջեքսոն Հոլում ելույթի ընթացքում նշել էր, որ ինֆլյացիայի տեմպերը նպատակային մակարդակին հասցնելու համար Բանկն առանց տատանվելու պատրաստ է ինչպես քանակական մեղմացման ծրագրով ակտիվների գնումների ծավալների ավելացման, այնպես էլ բացասական տոկոսադրույքների հետագա նվազեցման: Փաստորեն, Ճապոնիայի Բանկի կողմից դրամավարկային քաղաքականության մեղմացման և ՖՊՀ կողմից տոկոսադրույքի բարձրացման սպասումների ֆոնին արդեն ամսվա վերջում գրանցվեց USD/JPY փոխարժեքի նման աճ:

Նշենք, որ սպառողական գները Ճապոնիայում հուլիս ամսին շարունակել են անկումը, ինչի հետևանքով Ճապոնիայի Բանկի կողմից կրկին գնաճի խթանմանն ուղղված միջոցների ձեռնարկումը խիստ հավանական է: Երկրի Ազգային վիճակագրական գրասենյակի տվյալների համաձայն հինգերորդ ամիսը շարունակ սպառողական գների ինդեքսն անկում է գրանցում. Core ինդեքսը, որը չի ներառում գյուղատնտեսական բնույթի սննդամթերքի գները, հուլիս ամսին նախորդ տարվա հուլիսի նկատմամբ նվազել է 0.5%-ով (YoY), ինչը գերազանցում է սպասված 0.4%-ով անկմանը: Ընդհանուր ՍԳԻ-ն նվազել է 0.4%-ով (YoY)՝ սպասումների համապատասխան: Անկում գրանցած գների շարքում են էլեկտրաէներգիայի և բենզինի գները: Ըստ Ճապոնիայի Բանկի՝ երկրում աշխատավարձերի և սպառման մակարդակների անկումն ու ցածր տնտեսական աճը դեֆլյացիայի հետևանքներն են: Որպես գնաճի թիրախային մակարդակ Բանկի կողմից սահմանված է 2%-ը, որը, սակայն, չի ապահովվում նույնիսկ երեք տարի շարունակ Քանակական մեղմացման քաղաքականության կիրառման արդյունքում: Բանկի նախագահ Հ.Կուրոդան գնանկումը պայմանավորում է 2014թ-ից էներգակիրների համաշխարհային գների նվազման հետ՝ հայտարարելով, որ գնային ընդհանուր տրենդը կայուն կերպով բարելավվում է: Մյուս գործոնները, որոնք զսպում են գնաճը թույլ ներքին պահանջարկն ու իենի արժևորումն են: Աշխատավարձերի էական աճի



բացակայությունը սահմանափակում է ներքին պահանջարկն, իսկ իենի արժևորումը՝ նվազեցնում ներկրվող ապրանքների գները:

USD/RUB: Օգոստոս ամսվա առաջին կեսին ռուսական արժույթը, հետևելով նավթի գների աճին, դրսևորում էր արժևորման դինամիկա: USD/RUB փոխարժեքն օգոստոսի 1-18

Գրաֆիկ. USD/RUB փոխարժեք/ օգոստոսի 18-31



Ժամանակահատվածում, ավելի քան 5% անկում ապրելով, հասավ հուլիսի 21-ից հետո գրանցված նվազագույն 63.56 արժեքին:

Ռուբլու նման աճը բացի նավթի գների աճից պայմանավորված էր նաև նշված օրերին ԱՄՆ մի շարք բացասական տնտեսական ցուցանիշների հրապարակման արդյունքում ԱՄՆ ՖՊՀ կողմից 2016թ. ընթացքում ԴՎՔ տոկոսադրույքի բարձրացման սպասումների նվազման ֆոնին ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմամբ: Չնայած, որ նավթի գնից բացի առկա են ռուբլու փոխարժեքի վրա ազդող մի շարք այլ գործոններ ևս և վերջին մի քանի ամիսներին նկատվում էր նավթի գնի ու USD/RUB փոխարժեքի միջև կորելացիայի որոշակի թուլացում, այնուամենայնիվ նավթի գինը շարունակում է հանդես գալ որպես վերջինիս դինամիկայի բնորոշող հիմնական գործոն: Արդեն հուլիսի 17-օգոստոսի 17

Գրաֆիկ. USD/RUB փոխարժեք/ օգոստոսի 1-17



Ժամանակահատվածում նավթի գնի և USD/RUB փոխարժեքի օրական տվյալներով³ հաշվարկված կորելացիայի գործակիցը կազմել էր -0.88 (88%): Նավթի գնի աճը օգոստոսի 1-17 ժամանակահատվածում կազմել էր մոտ 22.7%:

Օգոստոսի 17-ին հայտնի դարձավ, որ Moody's միջազգային վարկանիշային գործակալությունն ավելացրել է Ռուսաստանի ՀՆԱ աճի 2017թ. կանխատեսումը: Համաձայն Moody's-ի հաշվետվության՝ ՌԴ տնտեսության 2015թ. ընթացքում գրանցած 3.7% անկումից հետո 2016թ. ընթացքում ևս որոշակի անկում կգրանցվի,

³ investing.com

սակայն արդեն 2017թ. նավթի գնի և արդյունաբերական արտադրության ծավալների աճի պայմաններում ՌԴ տնտեսությունը կկարողանա վերականգնվել՝ ապահովելով մոտ 2% տնտեսական աճ:

Օգոստոսի 17-ին նվազագույն արժեքին հասնելուց հետո USD/RUB փոխարժեքն արդեն օգոստոսի 18-ից փոխեց անկման դինամիկան՝ մինչ ամսվա վերջ աճելով ավելի քան 3.6%-ով: Ռուբլու դիրքերի թուլացումը մի կողմից պայմանավորված էր ՌԴ տնտեսության մի շարք ցուցանիշների հրապարակմամբ, մյուս կողմից՝ նավթի գնի անկմամբ և ԱՄՆ դոլարի դիրքերի ամրապնդմամբ: Նավթի ավելցուկային պաշարների շարունակվող աճը, արդյունահանման ծավալների ֆիքսման հարցում ՕՊԵԿ-ի երկրների միջև որևէ համաձայնության գալու հետ կապված սպասումների նվազումը հանգեցրին օգոստոսի 18-31 ժամանակահատվածում նավթի գնի՝ մոտ 10.7% անկման:

Օգոստոսի 18-ին հրապարակվեցին ՌԴ մի շարք տնտեսական ցուցանիշներ: Դաշնային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն հուլիս ամսվա ընթացքում ՌԴ գործազրկության մակարդակը հունիս ամսվա համեմատ նվազել է 0.1 կետով՝ կազմելով 5.3%: 2016թ. մարտ ամսին 2013թ. փետրվարից հետո առաջին անգամ 6% առավելագույն մակարդակի հասնելուց հետո, ՌԴ գործազրկության մակարդակը արդեն կրճատվում է 4-րդ ամիսը շարունակ: 2015թ. փետրվարից սկսած տարեկան կտրվածքով անկումներ են գրանցում ՌԴ մանրածախ առևտրի ծավալները: 2016թ. հունվարին գրանցվել էր առավելագույն տարեկան կրճատումը՝ -15.3%, ինչից հետո արդեն փետրվար ամսից որոշ չափով կրճատման տեմպերը սկսել են նվազել: 2016թ. հուլիս ամսին 2015թ. հուլիսի համեմատ ՌԴ մանրածախ առևտրի ծավալների կրճատումը կազմել է 5%: ՌԴ-ում հարկերի վճարման առավել ակտիվ օրերին՝ ամսվա 25-ին և 29-ին սովորաբար նկատվում է ռուբլու նկատմամբ պահանջարկի զգալի աճ և այլ էական բացասական գործոնների բացակայության դեպքում սովորաբար գրանցվում է ռուբլու արժևորում: Սակայն օգոստոս ամսվա ընթացքում նույնիսկ հարկերի վճարման ժամանակահատվածում ռուբլու նկատմամբ պահանջարկի որոշակի աճը չկարողացավ ամբողջությամբ զսպել վերջինիս անկումն այլ հիմնական արժույթների նկատմամբ: Որպես օգոստոսի երկրորդ կեսին ռուսական ռուբլու արժեզրկմանը նպաստող հիմնական գործոն կարելի է առանձնացնել նաև Ռուսաստան-Ուկրաինա հարաբերությունների սրումը:

Օգոստոս ամսվա վերջում ամսվա սկզբի համեմատ USD/RUB փոխարժեքը գրանցել է մոտ 1.6% անկում:

Ֆոնդային շուկա

ԱՄՆ: Օգոստոս ամսին ամերիկյան ֆոնդային ինդեքսների դինամիկան որպես

Գրաֆիկ. S&P 500, հլ-օգ 2016




ամսվա ընթացքում օրական կտրվածքով դիտվել են տատանումներ՝ պայմանավորված նավթի գների շարժով, տնտեսական ցուցանիշների հրապարակմամբ, ԴՊՀ ներկայացուցիչների ելույթներով: Արդյունքում, օգոստոսի առաջին կեսին գրանցվել է առավելապես աճողական, իսկ երկրորդ կեսին՝ նվազող դինամիկա:

Ամսվա սկզբին, Լիբիայի կողմից նավթի արդյունահանման իր ծավալների ավելացման վերաբերյալ հայտարարությունների ֆոնին նավթի գների մոտ 4.3% անկման, ինչպես նաև ԱՄՆ ոչ միանշանակ տնտեսական ցուցանիշների հրապարակման ֆոնին ամերիկյան ֆոնդային ինդեքսները նվազող դինամիկա գրանցեցին: ԱՄՆ Առաջարկի մենեջմենթի ինստիտուտի տվյալների համաձայն հուլիս ամսին արդյունաբերության ոլորտում գործարար ակտիվության PMI ինդեքսը հունիսյան 53.2 գործակցից նվազել է մինչև 52.6 գործակցից: ԱՄՆ 2016թ երկրորդ քառորդի ՀՆԱ-ն, վերանայված


առավել երկար ժամանակային հատվածի մաս դիտարկելիս ընդհանուր դինամիկայից շեղումներ չեն գրանցվել. հուլիս ամսվա առաջին կեսին շուկայի մասնակիցների շրջանում ռիսկի ախորժակի աճի ֆոնին կտրուկ աճ գրանցելուց հետո ամերիկյան ֆոնդային ինդեքսների դինամիկան վերածվեց կայուն տատանողականի՝ առանց որևէ ուղղությամբ արտահայտված տրենդ դրսևորելու: Վերջինս պահպանվեց նաև օգոստոսին:

Գրաֆիկ. ԱՄՆ ֆոնդային ինդեքսների դինամիկա. օգոստոս 2016


S&P 500



Dow Jones Industrial Average



ցուցանիշների համաձայն, աճել է 1.2%-ով, ինչը կանխատեսված ցուցանիշից կրկնակի ցածր էր: Հրապարակված ցուցանիշները մատնանշում էին նաև ինչպես բնակչության սպառողական ծախսերի աճի տեմպերի ավելացման, այնպես էլ եկամուտների աճի սպասվածից ցածր տեմպերին: Այս ֆոնին ինդեքսների որոշակի անկում գրանցվեց:



Օգոստոսի 3-ից, սակայն, աճի դինամիկան վերականգնվեց՝ խթանվելով նավթի շուկայում գների աճով, որոշակիորեն՝ կորպորատիվ հաշվետվություններով, իսկ օգոստոսի 5-ին ԱՄՆ աշխատաշուկայի վերաբերյալ սպասվածից բարձր տվյալների հրապարակման ֆոնին ամերիկյան ֆոնդային շուկայում գրանցվեց նոր պատմական մաքսիմում: 2016թ հուլիսին ԱՄՆ ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թվաքանակն աճել է 255հզ-ով, մինչդեռ կանխատեսվում էր միջինում 180հզ-ով աճ:

Մինչև ամսվա վերջին տասնօրյակն ամերիկյան ֆոնդային ինդեքսների աճի դինամիկան առավելապես խթանվեց սեպտեմբերին նավթ արդյունահանող երկրների միջև կայանալիք ոչ պաշտոնական հանդիպման սպասումների ֆոնին նավթի գների աճով: Ակնկալվում է, որ երկրները համաձայնության կգան նավթի արդյունահանման ծավալների ֆիքսման վերաբերյալ: Արդյունքում, օգոստոսի 15-ին ԱՄՆ ֆոնդային ինդեքսները նոր՝ ռեկորդային բարձր՝ 1999թ-ից ի վեր չդիտված արժեքներ գրանցեցին (S&P500 2,193.81, DJI՝ 18,668.44, Nasdaq Composite՝ 5,271.36): Ֆոնդային շուկայի համար աճի ազդակ էր նաև օգոստոսի 17-ին ԴՎՔ հուլիսյան նիստի՝ ԴՎՔ բազային տոկոսադրույքի մոտավորապես բարձրացման ակնարկ չպարունակող արձանագրության հրապարակումը:

Ռեկորդային բարձր արժեքների հասնելուց հետո ամերիկյան ֆոնդային ինդեքսներն օգոստոսի վերջին նվազեցին: ԴՊՀ ներկայացուցիչների կողմից հնչեցվող դիրքորոշումը տարվա ընթացքում 2 անգամ տոկոսադրույքների բարձրացման նպատակահարմարության օգտին և ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման համար բարենպաստ պայմանների ավելացման մասին ամենամյա ֆինանսական սահմադրույթի շրջանակներում Ջեյլենի հայտարարություններն հանգեցրին ԱՄՆ դոլարի դիրքերի ամրապնդմանը՝ զսպելով նավթի գների աճը: Նավթի շուկայում գնանկում գրանցվեց նաև ՕՊԵԿ-ի և ՌԴ միջև կայանալիք սեպտեմբերյան հանդիպման արդյունավետության վերաբերյալ կասկածամտության ձևավորումը: Նշված բոլոր գործոնները բացասական ազդեցություն են թողնում բաժնետոմսերի

շուկայի վրա՝ հանգեցնելով ֆոնդային ինդեքսների նվազմանը: Վերջին շաբաթվա մեջ S&P500 ինդեքսը նվազեց 1%-ով, DJI-ն՝ 1.2%-ով, իսկ Nasdaq Composite՝ 0.9%-ով: Ողջ ամսվա արդյունքներով S&P500-ը նվազել է 0.12%-ով, DJI-ն՝ 0.17%-ով, իսկ Nasdaq Composite՝ 0.2%-ով:

Եվրոպա: Եվրոպական ֆոնդային շուկան օգոստոսին գրանցել է աճի դինամիկա:

Ամսվա առաջին օրերին աճը խթանվեց ԱՄՆ ախատանքի շուկայի վերաբերյալ հրապարակված դրական ցուցանիշների, աշխարհի կենտրոնական բանկերի կողմից խթանող միջոցառումների վերաբերյալ ձևավորված օպտիմիզմի, նավթի գների աճի և մակրոտնտեսական էական նորությունների բացակայության ֆոնին կորպորատիվ դրական նորություններին ներդրողների արձագանքի կողմից: Ինդեքսների աճին էապես նպաստեց Անգլիայի Բանկի որոշումը ԴՎՔ բազային տոկոսադրույքը մինչև 0.25%

Գրաֆիկ. Եվրոպական բաղադրյալ STOXX EUROPE 600 ինդեքսի դինամիկա. օգոստոս 2016



մակարդակն իջեցնելու, պետական պարտատոմսերի գնման ծրագիրը 60 մլրդ ֆունտով ընդլայնելու և կորպորատիվ պարտատոմսերի գնման ծրագրի (10մլրդ ֆունտ) մեկնարկելու վերաբերյալ:


Ինդեքսների որոշակի անկում գրանցվեց օգոստոսի 11-17-ին ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի դիրքերի ամրապնդման ֆոնին՝ որպես արտահանող ընկերությունների բաժնետոմսերի վրա վերջինիս բացասական ազդեցության հետևանք: Արժույթների փոխարժեքի աճը դոլարի նկատմամբ պայմանավորված էր ամերիկյան թույլ տնտեսական ցուցանիշների ֆոնին դոլարի դիրքերի թուլացմամբ, այնպես էլ Եվրագոտու և Մեծ Բրիտանիայի համար հրապարակված դրական տվյալներով (Եվրագոտու առևտրային հաշվեկշռի դրական սալդոյի ցուցանիշը հուլիսին գերազանցել է սպասումները՝ կազմելով 29.2մլրդ եվրո, Մեծ Բրիտանիայի ՍԳԻ-ն հուլիսին աճել է 0.6%-ով(YoY)՝ 2014թ նոյեմբերից հետո գրանցելով աճի առավելագույն տեմպը):

Օգոստոսի վերջին ԱՄՆ ԴՊՀ ներկայացուցիչների հայտարարությունների ֆոնին դոլարի արժևորման հետևանքով աճեցին եվրոպական արտահանող ընկերությունների, հատկապես՝ ավտոարտադրողների բաժնետոմսերը՝ խթանելով ֆոնդային ինդեքսների աճը:

ՌԴ: Ռուսաստանյան ֆոնդային ինդեքսներն օգոստոսին առավելապես հետևել են նավթի գների շարժին՝ կրկնելով վերջինիս աճի դինամիկան: Նավթի գների աճը, սակայն, արժևորում է ռուսական ռուբլին, ինչի արդյունքում նվազում է ռուսաստանյան ակտիվների գրավչությունը՝ մասնակիորեն զսպող ազդեցություն ունենալով ֆոնդային ինդեքսների աճի վրա:

Օգոստոսի կեսին, սակայն, վերոնշյալ դինամիկան խախտվեց. Ֆոնդային շուկայում գրանցվեց անկում՝ անկախ նավթի գների շարունակվող աճից: Պատմական մաքսիմում (1,994.33) գրանցելուց հետո ռուսաստանյան MMBE ինդեքսն օգոստոսի 16-22-ն ընկած ժամանակահատվածում նվազեց մոտ 2%-ով: Վերջինիս պատճառը երկրի կառավարության կողմից «Башнефть» խոշորագույն նավթային կազմակերպության մասնավորեցման գործընթացի հետաձգումն էր, ինչի հետևանքով ընկերության բաժնետոմսերը մեկ օրում ավելի քան 8% անկում գրանցեցին: Նշենք, որ տարվա ընթացքում «Башнефть»-ի բաժնետոմսերը մասնավորեցման հետ կապված պլանների ֆոնին ավելի քան 50%-ով աճ էին գրանցել: Կազմակերպությունն օրական արդյունահանում է մոտ 425հզ բարել նավթ, ինչը կազմում է ՌԴ նավթի արդյունահանման ընդհանուր ծավալների մոտ 4%-ը: Ֆոնդային ինդեքսների աճողական դինամիկան վերականգնվեց օգոստոսի վերջին տասնօրյակում, թեև նավթի գների շարժն առավելապես նվազման ուղղությամբ էր: Ֆոնդային շուկայի աճը պայմանավորված էր ՌԴ ԿԲ կողմից շաբաթական ռեպո գործառնությունների սահմանաչափի ավելացմամբ: Ռուսական բանկերը ստացան մոտ 250 մլրդ ռուբլի, որից 220 մլրդը՝ ապահովվեց ԿԲ ռեպո գործառնություններով, իսկ ևս 26.4 մլրդ ստացվել է «Внешэкономбанк» բանկի կողմից բանկերում կենսաթոշակային միջոցների ավանդադրման արդյունքում (48 օր ժամկետով, 10.05% տարեկան տոկոսադրույքով): Միևնույն ժամանակ միջազգային գրոյական և նույնիսկ բացասական տոկոսադրույքների պայմաններում շարունակվում է արտաքին հատվածից կապիտալի ներհոսքը դեպի համեմատաբար բարձր տոկոսներ ապահովող ՌԴ շուկա: Նման մեծ քանակությամբ դրամական միջոցներն առավելապես ուղղվեցին դեպի ֆոնդային շուկա՝ հանգեցնելով ինդեքսների աճին: Օգոստոսի 23-ին ռուսական MMBE-ն ռեկորդային՝ մոտ 1% աճ գրանցեց: Ողջ ամսվա կտրվածքով MMBE ինդեքսը միջինում 4% աճ է գրանցել, PTC ինդեքսը՝ 7%:

Գրաֆիկ. Ռուսաստանյան MMBE ֆոնդային ինդեքսի և Brent նավթի գնի դինամիկա. օգոստոս 2016



**ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

2 օգոստոսի	Ճապոնիայի կառավարությունը հաստատեց տնտեսական խթանման ֆիսկալ միջոցառումների 28.1 տրլն իեն (274մլրդ ԱՄՆ դոլար) ծավալով փաթեթ:
4 օգոստոսի	Անգլիայի Բանկի նիստ: ԴՎՔ տոկոսադրույքը նվազեցվեց 0.25 կետով՝ մինչև 0.25% մակարդակը:
16 օգոստոսի	ՀՀ ԿԲ: 0.25 կետով նվազեցվեցին ԴՎՔ հիմնական տոկոսադրույքները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվելով 7.25%, լոմբարդային ռեպո տոկոսադրույքը 8.75% և դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը՝ 5.75% մակարդակներում:
17 օգոստոսի	Հրապարակվեց ԱՄՆ ԴՊՀ հուլիսի 26-27-ին կայացած նիստի արձանագրությունը:
26-28 օգոստոսի	ԱՄՆ: Ամենամյա միջազգային ֆինանսական սիմպոզիում:
26 օգոստոսի	ԴՊՀ նախագահ Ջ.Յելլենի ելույթ: ԴՎՔ խստացման օգտին խոսող գործոններ: